

4-5(679-680)
15.03.2023
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Հանաչել գիտնականին եւ գիտաբար, իմանալ զբանս հանձարոյ

ԼՍՐԱՐԱՐ

Лусарар ●

ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

● Lusarar

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է ապաշխարությունը: Ինչո՞ւ է կարևոր հատկապես Մեծ Պահքի ընթացքում և անհրաժեշտություն է, արդյոք, Պահքը: Կա՞ փրկություն առանց ապաշխարության: Ո՞ր մեղքերի համար կարելի է ապաշխարել: Ինչպե՞ս է դա տեղի ունենում:

Մեկնում է **Տեր Սիբայել եպիսկոպոս ԱՋԱՊՅԱՆԸ:**

- Ապաշխարությունը հոգու խնամք է, հոգու հիգիենա, հոգու առողջապահական միջոցառում: Մեր հավատքը հիմնված է այն մնայուն ճշմարտության վրա, որ մարդը ոչ միայն մարմին է, այլև հոգի: Մարմնի խնամքը շատ տեսանելի է, բոլորս էլ տեսնում ենք, Ավետարանն էլ է ասում, Քրիստոսն էլ է ասում՝ խնամում ենք մեր մարմինը, բայց հաճախ մոռանում ենք, որ մենք միայն մարմին չենք և պիտի խնամենք նաև հոգին:

Ապաշխարությունը և Պահքը այդ հոգևոր խնամքի բաղադրիչներ են: Երբ Պահք ենք պահում, կտրում ենք մարմնից, գրկում ենք մարմնից, որպեսզի հոգին ավելի առողջանա, հոգին զորանա: Եվ հոգևոր առողջությունը ավելի կարևոր լինի, քան իրապես մարմնական առողջությունը, որովհետև մարմնական առողջությունը հավերժ չէ, այն ի վերջո վերջ ունի, իսկ հոգևոր առողջությունը մնայուն է և հավիտենական: Սա հիշեցում

է այն մասին, որ հոգին է կենդանարար, «մարմին ի ոչ ոքն է», ինչպես ասում է Ավետարանը: Մարմինը ոչ մի բանի չի օգնում: Թեև այսօրվա աշխարհը, մի քիչ ավելի կենտրոնացած լինելով մարմնական արժեքների վրա, չի ցանկանում պահեցողության և ապաշխարության այդ կապվածությունը տեսնել: Նամանավանդ այլ եկեղեցական շարժումներ կան, որոնք դրա անհրաժեշտությունը չեն տեսնում: Բայց մեր եկեղեցին, որը դարավոր է, հիմնված է Առաքելական հավատքի վրա, բնականաբար հետևում է այն նույն ուղղությանը, ինչին որ հետևել է 2000 տարի: Այսինքն՝ պահեցողությունը կարևոր բաղադրիչ է ապաշխարության:

Ապաշխարությունն իր մեջ ներառում է զղջում, հատուցում, մեղքերի թողություն: Ցանկացած մեղքի համար պետք է զղջաս: Այն մեղքերի համար, որոնք հատուցում են պահանջում, պիտի հատուցես: Բավական չէ խոստովանել, որ գողություն ես արել, այլ պիտի հատուցես և հետո խոստովանես ու թողություն ստանաս: Այս բոլոր փուլերն անհրաժեշտ են, որպեսզի ապաշխարության ընթացքը լինի ամբողջական:

Այդքան հեշտ բան չէ խոստովանել գործածող հանցանքների համար, հեշտ բան չէ ներում հայցել նրանից, ում վատություն էս

արել: Դա պահանջում է մեծ ներուժ, մեծ կամք: Այնպես որ, ապաշխարության գնացող մարդը ոչ միայն նյութական ու մարմնական զոհողությունների է զնուն, այլ նաև շատ ուրիշ զոհողությունների: Բայց դրանով շահում է:

Ամեն մեղքի համար պետք է ապաշխարել: Դրա համար մենք ասում ենք՝ կամա և ակամա, գիտակցված և չգիտակցված մեղքեր: Մարդիկ կան, որ չեն գիտակցում, որ իրենք մեղք են գործում, կարծում են, թե արածները մի մեծ բան չէ, բայց բոլոր մեղքերի համար պետք է ապաշխարել, զղջալ և թողություն հայցել: Դրա համար Սուրբ Գրիգոր Տաթևացին մեզ տվել է բանաձև, որտեղ բոլոր հնարավոր և անհնարին մեղքերը, որոնք նույնիսկ կարծում ենք, որ մենք չենք գործել, խոստովանում ենք, որ գործել ենք: Բոլորս համոզված ենք, որ սպանություն չենք գործել, բայց նույնիսկ սպանության համար մենք խոստովանում ենք, որովհետև ի՞նչ իմանաս, գուցե չես սպանել, բայց քո անգիտակցական մի արարքով ինչ-որ սպանության հեղինակ դարձար: Շատ մեղքեր կան, որոնք մենք կարծում ենք, թե չենք գործել, բայց որոնք դոմինոյի էֆեկտով ուրիշի վրա ազդել են, և ուրիշին մղել են հանցանքի, մեղքի և կործանման, ինչի համար դու կա-

րող ես վաղը-մյուս օրը կանչվել պատասխանատվության: Աստծո համար անհնարին ոչինչ չկա: Աստված կարող է փրկել ցանկացածին: Բայց Աստված ասել է, որ չկա փրկություն առանց ապաշխարության: Սատանան միշտ մեզ հետ գրույցի մեջ է մեր հոգու, մեր մտքի դռներով: Եվ նա մեզ համոզում է, որ պետք չէ զնալ ապաշխարության: Բայց Աստված այնքան ողորմած է, որ առանց ապաշխարության էլ քեզ կփրկի: Աստծո համար չկան սահմաններ, և Աստված ի վիճակի է մեզ փրկել նաև առանց ապաշխարության: Բայց մենք իրավունք չունենք մտածելու, որ կարող ենք առանց ապաշխարության փրկվել: Մենք կարող ենք փրկվել միայն ապաշխարությամբ: Եվ դրա համար ինչպես մնացած վեց խորհուրդներն են կարևոր, այնպես էլ կարևոր է ապաշխարության խորհուրդը: Եվ եկեղեցացած մարդը (ով եկեղեցով է ապրում), պետք է մնայուն կերպով ապրի այս խորհուրդը: Եթե կան անկրկնելի խորհուրդներ, ապա ապաշխարությունը անկրկնելի խորհուրդ չէ, այն մնայուն, կրկնվող, հավիտենական, հարատև մարդու կյանքի մեջ է. մնայուն կերպով շարունակվող խորհուրդ է և ոչ թե միայն Պահքի այս 40 օրերին է խորհուրդ:



ՆԱ ԵՐԲԵՔ ԶԻ ՄՆԱԼՈՒ ԱՆՅՅԱԼԻ ՄԵՋ



ԵՐԿԻՐ ՍՐԲԱՎԱՅՐ

Հատված Վարդան Հակոբյանի «Քրիստոսի ծաղիկներ» ասք-պոեմից

Խոտերի ծայրին երազների երկինքը քայլում է այնպե՛ս, որ ոչ մի ծաղիկ չի ճկվում եւ չի թեքվել՝, քանի դեռ սուրսայր բեղիկները խոտի կամ հասկի չեն դիպել ամպերին, որոնք պայթում են փուչիկների պես ուռճացած օրվա եւ տեղիք տալիս հորդ տեղումների: Անձրեաթանձր մառախուղների ետեւում ճերմակամորուս աստվածներն՝ անընդհատ մոլորումների մեջ, ափեափ են նետում իրենց. չէ՞ որ մի վայրկյանում (իմ, քո, նրա ձեռքերով) հազար ու մի ճակատագիր են փոխում երկրում: Գանգեսից մինչեւ Ձանգու, մինչեւ Թարթառ ու Վուգա ժողովուրդներ են ելնում իրար դեմ, ափեր են քանդում, ափեր կամրջում, կիսում ծովեր, օվկիաններ, ամենուրեք կռիվ է խառն ու զավշտ, կոռուպցիա, ինտրիգներ, մաֆիա, որոնց մեջ բոլորն են եւ որոնց դեմ բոլորով էլ կռվում են, կործանում երկրներ անբանակ, ավերում աշխարհներ անբանակ, պրեզիդենտներ ընտրում անհաշիվ, վարչապետներ, նախարարներ, (միայն գինվոր լինելն է երկրի, ուր տեղն ազատ է՝ ինչքան ուզես, խնդրեմ), տապալում կուռքեր սուտ ու ճիշտ, անկենդան ու կենդանի մուսիաներ, կանգնում նրանց տեղ, նախագծում նոր գահեր, նոր մահեր ու գծում քարտեզներ բախտի անիվի պես ճռճացող այս հին մոլորակի վրա անհեճակ, որ դեռ անտարբեր այդ ամենին, պատվում է, պտտվում է շարունակ: Աշխարհը ոտքի տակ տվել, եկել-գտել են քո մեջ կետն իմ արքիմեդյան: Եվ, ահավասիկ, կանգնել են ահա թփերի արանքում, խոտերի մեջ ծնկահաս, ծաղկած խնձորենու եւ քո կողքին՝ փոքրիկ ձեռքը ափիս մեջ: Հայացքս վեր են հառել, համբուրելով անձրեւի կաթիլները տաք,

աչքերիդ չափ խոշոր-խոշոր, սպասում են, որ ճակատիս գրեթե ճշգրտումներ մտցնի Տերը, որն ինձ տվել է տառապանք անկշռելի ու ամեն պահ բզկտվող աշխարհի ամենամեծ սերը: Ձեռքս պահած թրի կոթին, ուր իմ նախնու մատնահետքը դեռ չի ջնջվել, խոնարհվում են մինչեւ գետինք, համբուրում հաչը Հավերժի, ըմբռնվելով քարի վրա-քանի՞ տարի-ծաղկակալող համը իմ մոր համբույրների, որոնցով ամեն քար էլ կարբանա, էլ ուր մնաց՝ հաչը մեր սուրբ Եթնուտակի: Նավակներս՝ աչքերդ զույգ, կտրում-անցում են անձրեւների ու ժամանակների ծովերն ամեն, հեղեղները եւ կանգնում ինչ-որ ակնթաթներում՝ ժամանակից դուրս անվերժանելի: Անձրեւի մեջ ոչ ոք չի տեսնում արցունքները, ոչ ոք չի տեսնում անձրեւի սանրը քո անհնազանդությունից հոգնած վարսե-րում, ոչ ոք չի տեսնում մեր տուն-վայրկյանը տիեզերքի մեջ: Արի գնանք տուն: Արի տուն գնանք: Արի... դուրը փնտրում է մեզ: Անվերջ լեռներ են տեղաշարժվում երկնքում: Ամպերի առյուծաթավիշջ տեղ-տեղ աղվեսամորթով է կարկատանված եւ Պլուտարքոսը որքան էլ փետի մագերն ու մացառնե՞րը բիզ-բիզ, դարձյալ ոչինչ չի կարող անել, դժբախտաբար: Եվ լեռներ են տեղափոխվում: Վերակերտվում է պահը անընդհատ: Ինչ որ մեկը, աղմկելով, խառնվում է գործերին Աստծո, նայեցեք՝ գրիչն էլ բռնել է բոբիկ ոտքի մատնածայրերով... Խուլ տնքոցներ կան գետնախորքերում: Աստվածների եւ չաստվածների կռիվն է անվերջանալի: Անցնում է ամբողջ մի հավիտենություն: Սամուը սեւ անապատի եկել, լեռան դուռն է ծեծում: Մի մութ ստվեր է պահվում-անհետանում քամիար սարի ծերպերի մեջ երկնուղեշ, իբր ամպ է, բայց ամպ է: Ամենաթեժ կետը երկիր մոլորակի, ուր կանգնում են՝ ոտքիս տակ է:

Կիմ ՎԱՐԲԻԵԼՅԱՆ
Գրող, բանասիրական գիտությունների թեկնածու

ՃԵՄԱՐԻՑ ՃԱՆԱՊԱՐԷ

ԲՈՒՈՐՍ ԵՆՔ ՏՆՏԵՍ



Պահոց շրջանի չորրորդ կիրակին, որ կոչվում է Տնտեսի կիրակի, հիմնված է Սուրբ Ավետարանի «Անիրավ տնտեսը» առակի վրա: Ստեփանակերտի Սուրբ Հակոբ եկեղեցում Տեր Մինաս քահանա Մովսիսյանը հերթական կիրակնօրյա Սուրբ Պատարագի արարողության վերջում անդրադարձավ «Տնտեսի կիրակի»-ի խորհրդին՝ մեկնաբանելով «Անիրավ տնտեսը» առակի բովանդակությունը:

Տեր հայրը նախ և առաջ օրհնության խոսք և սրտագին աղոթք ուղղեց առ Աստված մեր բոլոր զինվորների համար, որոնք այս պահին իրենց քաջ առաքելությունն են իրականացնում մեզ համար, մեր երկրի, մեր եկեղեցու համար՝ հավատացյալների հետ միասին խնդրելով, որ Աստված պահպան լինի բոլորին, խաղաղություն տա մեր աշխարհին, համայն աշխարհին, հավաքածի չարը մեր կյանքից, մեր սահմաններից հեռու: Եվ որ՝ մեզ հնարավորություն ընձեռվի Աստծո կամքով և օրհնությամբ կազմակերպել մեր ընտանեկան, հասարակական կյանքը, որ մեր բնականոն ընթացքը ապահով լինի, որովհետև մարդ կոչված է այդ առաքելությունը կատարելու և ապրելու որպես մարդ՝ Աստծո հայացքի առջև, նաև օգնելու և իր հոգևոր պարտականությունը կատարելու Աստծո և մարդկանց առջև:

Տեր հայրը փաստեց, որ իսկապես մեզ համար այս ժամանակները շատ դժվարին են, բայց դրանք, ինչպես միշտ ինքն ասում է, հավատացյալների համար չեն: «Մենք առանց դժվարությունների չենք եղել և միշտ կարողացել ենք հաղթահարել դրանք Աստծո կամքը ու մեր առաքելությունը կատարել այս աշխարհում: Այս անգամ էլ, անցնելով այդ դժվարությունների միջով, որպես Արցախի աշխարհ, որպես երկիր՝ հզոր, ամուր և հիմնավոր իր մեծ կյանքով, մեծ անցյալով ու ներկայով պիտի կարողանանք ապրել և հաղթահարել դրանք: Ու կհաղթահարենք»,- ասաց տեր Մինասը և վկայակոչեց անիրավ տնտեսին:

Ի՞նչ է մեզ ցուցանում անիրավ տնտեսն իր կյանքով, խորհրդով: Նախորդ կիրակնօրյա պատարագը անառակի կիրակիին էր նվիրված: Ըստ քահանայի՝ անառակ որդու միջոցով մարդկային բնությունն է Աստծո առջև ստանում ներում և ապաշխարություն: Իսկ այս անգամ մեր հայացքն ուղղված է անիրավ տնտեսին: Հոգևորականի մեկնությամբ՝ Աստված ամեն մարդու տվել է մի տնտեսություն, որպեսզի նա կառավարի, ղեկավարի և այդ տնտեսության մեջ կարողանա այնպես կատարել իր պարտքն ու պարտականությունը, որ ամեն բան լինի աստվածահաճո: Անիրավ տնտեսը վատնեց իր տիրոջ ունեցվածքը, նրա վրա ամբաստանություն եղավ: Տերն ասաց, որ պետք է նրան տնտեսությունից հեռացնի, որովհետև ամբաստանություն է եկել նրա-

նից: Տնտեսն ընկավ ստածումի մեջ, թե ինչ անի, որ չզրկվի մարդկանց տներից, հյուրասիրությունից, բարեկամությունից: Ու ելքը գտավ: Նա կանչում է իր տիրոջ պարտականներին և որոշակի տոկոսային հարաբերությամբ թեթևացնում նրանց պարտքերը: Տնտեսը փորձում է իր տիրոջ ունեցվածքով բարեկամներ շահել: Եվ իր տիրոջ պարտականներից յուրաքանչյուրին մեկ անգամ մեկ իր մոտ կանչելով՝ առաջինին ասում է. «Իմ տիրոջը ինչքա՞ն պարտք ունես»: Եվ սա ասում է. «Հարյուր տակառիկ ձեռք», և տնտեսը նրան ասում է. «Առ քո մուրհակը և նստիր ու անմիջապես գրի՛ր հիսուն»: Ապա դարձյալ մյուսին ասում է. «Դու ինչքա՞ն պարտք ունես», և սա ասում է. «Հարյուր պարկ ցորեն»: Տնտեսը նրան ասում է. «Առ քո մուրհակը և նստիր ու գրի՛ր՝ ութսուն»: Թեև տնտեսն անիրավ էր, սակայն իր ունեցվածքից բաշխելով՝ դրանով բարեկամներ շահեց: Մուրհակները նրանց ձեռքը տվեց և հրամայեց պարտքը նվազեցնել, որպեսզի նրանք բարեկամանան իր հետ և իրեն ընդունեն իրենց տանը: Մեծահարուստը, փոխանակ բարկությամբ գայրանալու, հիանում է տնտեսի հնարագիտության վրա և գովասանքի արժանացնում:

Շատ խրթին և անհասկանալի, միևնույն ժամանակ բազմիմաստ առակ է սա: Հոգևոր տեսանկյունից տեսնում ենք դրա կարևոր նպատակը՝ բոլորս էլ այս աշխարհում տնտես ենք և ունենք իշխանություն մեր տնտեսության վրա: Թե ինչպես ենք այդ իշխանությամբ կատարում մեր առաքելությունը մեր տնտեսության մեջ, որպեսզի երբ այս աշխարհից գնանք Աստծո մոտ, գովասանքի արժանի լինենք, այլ ոչ թե պարսավանքի, որ չենք կարողացել մեր տնտեսությունը կառավարել աստվածահաճո կերպով:

Հոգևոր հոր բացատրությամբ՝ մարդը բնությունից ոչինչ չունի, ամեն բան, ինչ որ կա երկրի վրա, Աստծուց է տրվել իրեն. թե՛ շնորհ, թե՛ արվեստ, թե՛ իշխանություն, թե՛ վարդապետություն և ամեն բան: Այս աշխարհն իր նյութական հարստությամբ և իր ողջ տնտեսությամբ ոչ մեկի սեփականությունը չէ, որովհետև այդ բոլորը Աստված պարգևել է մեզ, որպեսզի կարողանանք այնպես ծախսել և վարել մեր տնտեսությունը, որ մեզ շրջապատող մարդիկ, մանավանդ աղքատները գոհություն հայտնեն Աստծուն, այլ ոչ թե բամբասեն ու բողոքեն: Եվ դրա համար շատ էական է այս առակը, որի կարևոր նպատակն այն է, որ մարդն ապրում է Աստծո աղոթքով և ողորմությամբ: Եթե իր առաքելությունը մարդը չի կատարում, նա չի կարող Աստծո գովասանքին արժանի դառնալ. «Եվ դրա համար մենք բոլորս պիտի լուրջ նայենք մեր կյանքին. ամեն մեկս մեր տեղում ծնող ենք, ուսուցիչ ենք կամ տնտես ենք, մեծահարուստ ենք կամ այլ բնագավառի որևէ մի պատասխանատու: Պաշտոն ունենք, պիտի իրոք այն ծառայեցնենք այնպես, որ կարողանանք Աստծո առաջ ներկայանալ որպես տնտես և Նրա գովասանքին արժանանալ»:

Շարունակելով մեկնությունը՝ տեր Մինասը բացատրեց, որ մարդն ինքը ևս տնտես է, ու մարդու մեջ տնտեսը նրա միտքն է, որը կառավարում է նրա ներքին կյանքը: Միտքը հոգու և մարմնի կյանքն է կառավարում: Ուստի մարդն ինքը նույնպես մի տուն է, հոգու տաճար, որտեղ պետք է լինի ներդաշնակություն, շնորհների զանազա-

նություն: Իսկ այդ ամենը կառավարում է մարդու միտքը: Եվ այդ միտքը պիտի լինի իմաստուն ձևով ու ասվածահաճո իր առաքելությունը կատարի:

Այս առումով մենք մեր շուրջը տեսնում ենք շատ թերություններ, մեղքեր և նահանջներ Աստծուց: Այդ ամենի պատճառն այն է, որ մենք իմաստուն չենք վարվել մեր ունեցվածքի, մեր տնտեսության հետ, հավատարիմ չենք եղել մեր առաքելության մեջ: Եթե ճիշտ ենք ճանաչում մեր տնտեսությունը, դա շատ կարևոր է մեր հոգևոր փրկությունը իսկապես արգասավոր դարձնելու համար, քանզի շատ ժամանակ մենք ունենում ենք իշխանություն, որը կարծում ենք, թե մեր սեփականությունն է: Իշխանությունը ոչ մեկի սեփականությունը չէ, այն Աստծուց տրված օրենքներ են, որոնք մենք պետք է օգտագործենք մարդկային կյանքը բարելավելու համար: Իսկ այդ օրենքներն ասում են, որ ոչ մի նշանակետ անհետ չի լինելու, Աստծո բոլոր օրենքները կատարվելու են մինչև վերջ: Եվ Աստծո օրենքների կատարումից հետո լինելու է նաև հաշվետվություն մեր արարքների համար: Եվ այդ ժամանակը գալու է: Դրա խորհուրդը տեսնում ենք «Անիրավ տնտեսը» առակի մեջ: Տնտեսը հասկացավ, որ երբ եկավ ժամանակը, և ինքը տնտեսությունից հանվեց, այսինքն՝ այս աշխարհից գնաց Աստծո մոտ, նա այդ պահին հնարամիտ գտնվեց և ողորմություն կատարեց. պարտքը վճարեց, որպեսզի երկնային տան մեջ իր տեղն ունենա: Սա է առակի գերագույն գաղափարը:

Դրան առնչվում է նաև «Աղքատ Ղազարոսը» առակը: Ղազարոսը չարչարվեց մեծահարուստի դռների մոտ, բայց նա անտարբերության մատնեց նրան, ու երբ տեղափոխվեցին հանդերձյալ աշխարհ, այնտեղ Ղազարոսը հանգստություն գտավ, իսկ մեծահարուստը, որ այս աշխարհում ապրում էր ճոխությամբ, այնտեղ չարչարանքի մեջ էր:

Քրիստոսը աղքատ Ղազարոսի և մեծահարուստի օրինակով ցույց տալիս արդար ու ճշմարիտ ապրելու, երկնքի արքայությունը ժառանգելու ճանապարհները:

«Ուստի այս ամենը այն մասին է, որ ինքններս ավելի լուրջ նայենք մեր կյանքին, մեր տնտեսությանը: Ժամանակը կգա, և մենք այս ամենի համար պիտի հաշվետվություն տանք Աստծուն», - այսպես ավարտեց իր մեկնությունը Տեր Մինաս քահանան: Ապա կրկին վերադառնալով մեր ժողովրդին, մեր եկեղեցուն, մեր կյանքին՝ խնդրեց, որ Աստված օրհնի մեր կյանքը, մեր ժողովրդին, զորացնի մեզ այս դժվարին ժամանակներում, և կարողանանք Աստծո բարեհաճությամբ հաղթահարել մեր առաջ ծառայած դժվարությունները մեր ճիշտ ապրելակերպով:

Եվ հավատացած ենք, որ այս ամենը կհաղթահարենք, քանի որ այդպես ենք մենք նայում առաջ՝ հավատով, հույսով և սիրով:

Թող Աստված օրհնի մեզ բոլորիս, զորացնի, և ճիշտ կազմակերպենք ու կառավարենք մեր բոլոր կարգի տնտեսությունները՝ մեր ընտանիքները, երեխաների կրթությունը, դաստիարակությունը, հոգևոր առաքելությունը ընդհանրապես:

Աստծո օրհնությունը՝ բոլորիս այժմ և միշտ, հավիտյանս հավիտենից: ԱՄԵՆ:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ

Ապաշխարությունն այն վերջնական հանգրվանն է, որը կատարվում է քահանայի հետ: Դա է խորհուրդը: Եվ ո՞րն է այդ խորհուրդը. որտեղ տեսանելիին հետևում ենք, նկատում ենք անտեսանելիին, մեղքերի թողությունը: Քանի որ մենք հավատում ենք մեղքերի թողությանը, հավատում ենք, որ քահանան իշխանություն ունի մեղքերին թողություն տալու: Եվ երբ մենք ասում ենք՝ ապաշխարության շրջան և մոտենում ենք քահանային ու խոստովանում ենք մեր գործած և չգործած մեղքերը և քահանայից թողություն ենք ստանում, այդ թողությունը տեսանելի չէ: Բոլոր յոթ խորհուրդներն այդպիսին են: Երբ տեսնում ենք մկրտություն, չենք տեսնում, թե սուրբ հոգու շնորհները ինչպես են իջնում, բայց հավատում ենք, որ անտեսանելի կերպով դա կատարվում է: Նույնն էլ ապաշխարության մեջ մենք չենք տեսնում մեղքերի թողությունը տեսանելի կերպով, բայց հավատում ենք, որ այդ մեղքերի թողությունը առկա է, իրական է, վավերական է, ամբողջական է, անբեկանելի է, որովհետև այդ մեղքերի թողությունից հետո նախկին մեղքերն այլևս սրբվում են:

Մեզ բոլոր տարիներին պետք է եղել ազգային ապաշխարություն, ինչից որ մենք հրաժարվեցինք, ծիծաղեցինք, հեգնեցինք, տերտերների գործը համարեցինք: Նույնիսկ Մեծ Պահք պահողների թիվն այնքան սահմանափակ է, որ ծիծաղելի է: Եվ շատ հաճախ Պահքի և ապաշխարության մեջ եղողները դեռ ծաղրի ու հեգնանքի են արժանանում նույնիսկ: Իսկ դա նշանակում է, որ մեր կյանքի դժբախտությունները շարունակվելու են:

Մեր հոգևորականներից շատերն են խոսել համազգային ապաշխարության անհրաժեշտության մասին, բայց դա մնաց ծայր բարբառոյ յանապատի: Բայց այսօր էլ ուշ չէ: Ցանկացած մարդու համար երբեք էլ ուշ չէ ապաշխարությունը: 99 տարեկանում էլ ինքը կարող է զղջալ և թողություն ստանալ բոլոր 99 տարիներին գործած ահավոր հանցանքների համար: Նույնն էլ ազգի համար երբեք ուշ չէ: Դարձյալ մենք կարող ենք համազգային ապաշխարության շապիկը հագնել, զղջալ, ապաշխարել մեր ազգի գործած բոլոր սխալների, հանցանքների համար: Բայց դրա համար նախ պետք է գիտակցել, որ մենք սխալներ ենք ունեցել, որոնց պատճառով ենք այս թշվառության մեջ և ոչ թե մեղադրել ուրիշին: Սեփական թուլությունները, սեփական տկարությունները տեսնելու մասին է խոսքը, թե ինչու ենք մենք հասել այս թշվառության, որը մեր համազգային ողբերգությունն է: Համազգային բացթողումների, սխալների, մեղանջումների, հակաքրիստոնեական ընթացքի, մեր առաքելությունը ժխտելու, մեր ինքնությունը ժխտելու պատճառով: Իսկ ինքնության ժխտումն ինքնին մեղք է, որովհետև մեր ինքնությունը մենք չենք ստեղծում, մենք այդ ինքնությամբ ծնվում ենք: Դա ձեռքբերովի չէ: Դա տալիս է Աստված: Իսկ դրան պետք է տեր կանգնել: Այդ ինքնությունը պետք է խնամել, զուրգուրել: Այո, չմեծացնել, հպարտացնել, դարձնել պաշտամունքի առարկա: Մեր սեփական ինքնությունը չէ, որ պաշտամունքի առարկա է: Պաշտամունքի առարկան մեր այդ ինքնությունը մեզ տվողն է: Բայց և այնպես, ինքնության նկատմամբ պետք չէ հանցագործություն գործել: Իսկ մենք մնայուն կերպով, մեր քրիստոնեական ինքնության նկատմամբ մնայուն և շարունակական հանցանքի մեջ ենք եղել այս երեսուն տարիներին և դրանից առաջ: Եվ դրա հետևանքի մեջ ենք:

Եթե հասկանանք, որ պատճառը նաև քրիստոնեական արժեքներից հեռանալն է, քրիստոնեական ինքնության ժխտումն է, որին կարելի է վերադառնալ համազգային ապաշխարությամբ, երբեք էլ ուշ չէ կանգնել համազգային ապաշխարության ճանապարհին:

ԸՆԹԱՅ

ՂԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԴՊՐՈՑԻ, ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՄԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՀՈՐԳ

Խորհրդային պետության, սոցիալիստական հասարակարգի փլուզումը, շուկայական հարաբերությունների ներդրումը, տնտեսական, սոցիալական, մշակութային ասպարեզում կտրուկ փոփոխությունները մեր կյանքի բոլոր բնագավառներում վերափոխումների սկիզբը դրեցին: Մենք դիտավորյալ չօգտագործեցինք «դրական փոփոխություններ» բառակապակցությունը. պարզ է, որ այն շատերին դուր չի գա:

Մանկավարժական գիտությունը, դպրոցական համակարգը, մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության ողջ գործընթացը ամսման չմնացին վերը նշած հարաբերությունների շրջապատյալից: Ներկայումս այդ բնագավառի հիմնահարցը պետք է որ լինի կրթական ողջ համակարգը որակական նոր մակարդակի բարձրացման ուղղությամբ մեթոդների մշակումը: Միայնակ չեն լինի, եթե ասեն, որ մանկավարժական կոլեկտիվներն առայժմ չեն հասել հասարակության, հայրենիքի հանդեպ պատասխանատվության գաղափարներով տոգորված անհատների ձևավորման գործում բավարար արդյունքի: Դա նշանակում է, որ շատ անելիքներ կան մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության մակարդակը որակական ցուցանիշներով բավարարելու, ինքնուրույն հասարակական կյանքին, աշխատանքային գործունեությանը, կյանքին նրանց նախապատրաստելու գործում: Դպրոցը պարտավորված պետք է լինի կրթությանը զուգահեռ սովորողներին պատվաստել հայրենիքի հանդեպ սիրո զգացում, կոլեկտիվիզմ, մեծերի, ծնողների և ուսուցիչների հանդեպ հարգանք, պատասխանատվություն՝ իրենց վարքագծի համար, զարգացնել ինքնակառավարման, ինքնադրսևորման մակարդակը: Կառավարությունը չի կարող զարգացնել տնտեսությունը, մշակել և առաջ մղել պետության ռազմավարությունը առանց կրթության ամբողջ համակարգի բարելավման: Երբ հարկ է լինում պլանավորել գիտամանկավարժական ուսումնասիրությունները և դրանք ուսուցանելու ու դաստիարակության մեջ գործնականորեն ներդրելու եղանակները, պետք է ելնել հենց վերը նշած ռազմավարական դրույթներից: Սա էլ իր հերթին նշանակում է, որ պետք է անշեղորեն բարձրացնել միջնակարգ, ինչպես նաև բարձրագույն կրթության որակը: Սա դյուրին լուծվող հարցերից չէ, առավել ևս չի կարող լուծվել վերնաշրջանի տրվող հրամաններով: Ինձ թվում է, որ մենք լուրջ անելիքներ ունենք գիտատեխնիկական նվաճումների հիման վրա հասարակական, ինչու չէ, նաև մասնավոր արտադրության նյութատեխնիկական բազայի արմատական նորացման, հասարակական հարաբերությունների և առաջին հերթին տնտեսական հարաբերությունների կատարելագործման, աշխատանքի բովանդակության ու բնույթի, կյանքի նյութական ու հոգևոր պայմանների բարելավման, հասարակական, գաղափարական բոլոր հաստատությունների աշխատանքների ակտիվացման գործում:

Այս կարելի է հասնել նախ և առաջ մարդկային գործունի դերի բարձրացման, յուրաքանչյուր անհատի ակտիվ ստեղծագործական աշխատանքի շնորհիվ:

Անհրաժեշտ են մասնագիտորեն գրագետ, հմուտ, բարոյապետ կայուն կադրեր՝ օժտված նոր աշխարհընկալմամբ, նոր մտածողությամբ: Այս պարագայում գերազանցատեղի է մանկավարժական գիտության դերը, որի նպատակը պետք է լինի մանկավարժահոգեբանական ուսումնասիրությունների շրջադարձը դեպի դպրոց, ուսումնադաստիարակչական աշխատանքների նորացումն ու կատարելագործումը, կրթական համակարգի արմատական փոփոխությունները: Դրա համար իբրև առաջնահերթություն պետք է դիտարկել կրթության որակի անկման պատճառները, հանգամանակից ուսումնասիրել ու վերլուծել այն գիտամեթոդական ուղիները, որոնք կտանեն հիմնահարցի հիմնավոր լուծման:

Առաջինը, որ տեսանելի է, նաև անգն աչ-

քով, դպրոցը որակյալ մանկավարժական կադրերով ապահովելն է: Այստեղից ամենապարզ հետևությունն այն է, որ պետք է կատարելագործել մանկավարժ մասնագետների բարձրագույն կրթության համակարգը: Բարձրագույն կրթության համակարգում անհրաժեշտ է հնարավորինս բացառել ցանկացած սոցիալական զիջումներ. այդ ասպարեզը պետք է թողնել բացառապես նրանց, ովքեր կարողանում են (զոհնե մվազագույն չափով) յուրացնել ծրագրային պահանջները: Այսօր քան երբևէ բարվոք են դպրոցների շենքային պայմանները, դպրոցներն ունեն բավարար նյութատեխնիկական բազա, կահավորված լաբորատորիաներ, մարզադահլիճներ, գանազան տեխնիկական խմբակների համար արդիական սարքավորումներ: Ուստի բոլոր աշխատանքները պետք է ուղղված լինեն կադրերի պատրաստման ու վերապատրաստման գործին:

Շատ ավելի դժվար է մարդու հայացքների, սովորույթների, մտածողության, վարքագծի համակարգը վերափոխելը: Եվ առավել դժվար է այն մարդկանց համար (45-50 տարեկանից բարձր), ովքեր ապրել, աշխատել են սոցիալիստական հասարակարգում, ում հոգուն հարազատ են այնպիսի արժեհամակարգեր, ինչպիսիք են՝ անվճար կրթություն, բուժսպասարկում, անսահմանափակ աշխատատեղեր, սոցիալական հավասարություն հասարակության անդամների միջև, չծանրաբեռնված ընտանեկան հոգսեր, ամուր և հուսալի պաշտպանված, միջազգային հարթակներում բարձր վարկանիշ ունեցող հայրենիք: Այս բոլորը միանգամից մոռանալ, շրջանցել, ժամանակ առ ժամանակ չանդրադարձնել՝ մոլորակալի դժվար է: Ինչ մնում է երիտասարդ սերնդին, որի մանկությունը անցել է թնդանոթների որոտի տակ, պատանեկությունը՝ ոչ պատրաստ, ոչ խաղաղություն պայմաններում կամ պատերազմի (ցանկացած պահի) վերսկսման վտանգի ներքո, նրա համար դժվար է գտնել, թե ով է ինքը, որտեղից է գալիս, ուր է գնում հարցերի պատասխանները (բայց թվում է, մի քիչ շեղվեցի ընտրած թեմայից):

Մանկավարժությունը՝ որպես գիտություն, և նրա հիմնական պրոդուկտ կրթությունը այն գիտությունների թվին են պատկանում, որ չեն կարող շրջանցել հասարակական հարաբերությունները. սա ինչ-որ գյուտերի ասպարեզ չէ: Այն կոչված է պատրաստել կադրեր, մասնագետներ տվյալ հասարակարգին սպասարկելու համար, կյանքի բոլոր ոլորտներում: Դպրոցի կրթության որակի բարձրացման համար արմատական փոփոխություններ են անհրաժեշտ: Մեր բուհերն իրենց գործունեության հիմքում այս ռազմավարությունը պետք է ունենան. չէ՞ որ նրանց է վերապահվում դպրոցների համար մասնագետներ պատրաստելու գործը: Անհրաժեշտ է վերափոխել ուսուցչի մանկավարժահոգեբանական կեցվածքը, նրա կողմնորոշումները, իր գործի նկատմամբ մոտեցումների համակարգը: Այսօր այս համակարգում լուրջ թերություն պետք է հաշվել սխալներից խուսափելը ու դրան զուգահեռ օրինակելին, լավն ըստ արժանվույն չզննահատելը: Համարձակ, անաչառ խոսելով թերությունների մասին՝ կարելի է որոշները վերացնել, եթե նրանց արմատները շատ ավելի խորքերում չեն, և վերադասի միջամտության կարիք չկա:

Մանկավարժության մասնագետների ուշադրության կենտրոնում պետք է լինի այն, թե ինչպիսի հատկանիշներ պետք է դպրոցն իր սաների մեջ ձևավորի, որպեսզի նրանք կարողանան դառնալ ժամանակակից գիտատեխնիկական առաջընթացի ակտիվ մասնակիցներ: Ուշադրությունից չպետք է վրիպեն ուսուցման ու դաստիարակության հիմնահարցերի առանցքային ուղղվածությունները և դրանք արմատավորելու տեսության մշակումը: Այդ հարցերի լուծման ակունքները պետք է փնտրել ուսումնական պլանների, ծրագրերի, դասագրքերի, ուսումնական ձեռնարկների անընդհատ կատարելագործման ու արդիականացման մեջ: Նրանք պետք է

իրենց մեջ ներառեն գիտելիքների ձեռքբերման գործընթացին նպաստող այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են երեխաների հիշողության ընկալման աստիճանը, մտածողության հնարավորությունները տարիքային տարբեր աստիճաններում, նրանց հոգեբանական ու անձնային զարգացման առանձնահատկությունները ժամանակակից պայմաններում:

Երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարները պետք է ինչ-որ չափով արտացոլված լինեն միջնակարգ կրթության, միջնակարգ մասնագիտական կրթության, արհեստագործական ուսումնարանների կրթության բովանդակության մեջ և այդ բովանդակությունը հիմնավորող ու իրականացնող ուսուցիչներում, ծրագրերում, դասագրքերում: Սովորողներին գիտելիքներով զինելը, նրանց գաղափարաբարոյական արժեքներով օժտելն ու դաստիարակելը չպիտի դիտարկել որպես զուտ ներկրթական հիմնահարց: Դրանք պետք է դիտարկել իբրև հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, ինչ-որ տեղ՝ համամարդկային հիմնահարց: Ասածիս վկայությունն այն է, որ շատ երեխաներ տհաճությամբ են գիրք վերցնում, սովորելու նկատմամբ հակում չեն դրսևորում (գերադասում են հեռախոսով ժամերով զբաղվել, քան գրքից օգտվել): Պատճառները չպիտի փնտրել միայն դպրոցում: Դրանք լուրջ արմատներ ունեն ձգած նաև դպրոցի դուրս՝ հասարակական կյանքում: Չենք կասկածում, որ դպրոցը նախ և առաջ պարտավոր է երեխային դաստիարակել այնպես, որ առաջին հերթին ուսումնական աշխատանքը, ապա՝ աշխատանքն ընդհանրապես դառնա առաջին անհրաժեշտություն, քաղաքացիական պարտք: Պետք է մշակել նպատակաուղղված ռազմավարություն, սովորողների մեջ ձևավորել գիտելիքների պահանջները, ուսումնաստեղություն, գիտելիքներն ընդլայնելու և խորացնելու ցանկություն, ձգտում (նաև՝ ինքնակրթության միջոցով):

Ծավալուն և բովանդակային առունով ընդգրկուն հարց է միջնակարգ դպրոցի միատիպությունը: Ծիշտ է, վերջին ժամանակներս այդ ուղղությամբ որոշակի աշխատանքներ կատարվել են, այն է՝ ավագ դպրոցների և հոսքային դպրոցների բացումը հանրապետության որոշ բնակավայրերում: Չեն կարծում, թե հոսքային դպրոցները կարողանում են տարբեր բնակավայրերից ներգրավել բնագիտական կամ հումանիտար առարկաներից կայուն գիտելիքներ ունեցող սովորողների: Գործընթացն ինքնին դժվար իրականացնելի է, առավել ևս՝ մեր ժամանակներում. տարբեր դպրոցներից մի քանի աշակերտներ տեղափոխել հոսքային դպրոց գրեթե անհնարին է (նախկինում տարածաշրջանի միջնակարգ դպրոցին կից կար, այսպես կոչված, ինտերմատ, և 8-ամյա դպրոցի շրջանավարտները տվյալ միջնակարգը հաճախելիս տեղում մնալու հնարավորություն էին ունենում): Ստացվում է այնպես, որ այն աշակերտները, ովքեր լավ գիտեն, ասենք, բնագիտական առարկաները, բայց հումանիտարը՝ ոչ, այնուհանդերձ, իրենց չյուրացրած առարկաներից ատեստատում ունենում են դրական գնահատականներ, ինչը ոչնչով չի խոչընդոտում բուհ ընդունվելուն: Կան ատեստատը էապես չի արտացոլում իրականում առկա գիտելիքների միջև խիստ անհավասարությունը: Եթե մայրաքաղաքում առկա ավագ դպրոցները, նաև՝ ֆիզմաթ դպրոցը որոշակի հնարավորություններ ստեղծում են այդ բացը լրացնելու համար, ապա գյուղական դպրոցներում դժվարություններն ակնհայտ են: Հարցի լուծմանը կարող է նպաստել խոշոր դպրոցներում մասնաբաժիններ ունենալը մասնագետների առկայության դեպքում: Բացառիկ շնորհալի երեխաների համար անհրաժեշտ կրթության և գործունեության տեսակ ընտրելու հնարավորության ստեղծումը նույնպես կնպաստի հարցի մեղմացմանը: Ինչ վերաբերում է կրթության որակի բարձրացման հիմնահարցերին, դրանք համեմատաբար հեշտությամբ են վեր-

լուծվում, ինչը, չէի ասի դաստիարակության հետ կապված հարցերի մասին:

Դպրոցին է վերապահվում երեխաների համար մանկության տարիքից իրական պայմաններ ստեղծել, որպեսզի անձը լինի նախաձեռնող, ձեռնարկել հետաքրքիր, համարձակ գործեր, ստեղծագործական մոտեցում ցուցաբերել առկա հիմնահարցերի նկատմամբ, ինքնուրույն որոշումներ կայացնելու ձգտում ունենալ: Այո, այս ամենը անհրաժեշտ է սովորեցնել մանկությունից: Դրանց շատ դրույթներ ներառված են «Ձարթոնք» մանկապատանեկան կազմակերպության խմբերում ընդգրկվողների իրականումների ու պարտականությունների մեջ:

Սակայն հարց է ինչպե՞ս են գործում այդ կազմակերպության «Աստղիկներ», «Արծվիկներ», «Հայկազուններ» խմբերը և գործո՞ւմ են, արդյոք: Դպրոցական կյանքին շատ թեքիչ ծանոթ անձնավորությունը կնկատի, որ այն հասարակության կյանքն է փոքր ծավալով: Դա նշանակում է, որ կրթության համակարգի վերակառուցումն ու կատարելագործումն անհնար է, եթե իրականության մեջ գոյություն ունեն շատ բացասական երևույթներ:

Մարդկային գործունի ուժեղացումը երաշխիքներ է ստեղծում արտադրության, գիտության, մշակույթի, նաև դպրոցական համակարգի վերափոխման, զարգացման ու կատարելագործման համար: Մարդկային գործունի ուժեղացումն ամենից առաջ հարգանք է անձի նկատմամբ, նրա պոտենցիալ հնարավորությունների դրսևորման ու օգտագործման համար բարենպաստ պայմանների ստեղծում: Դա նաև ցույց է տալիս, թե անհատն ինչպես է նախապատրաստվում կյանքին, թե դրա համար ինչ է տվել նրան դպրոցը: Ստացվում է, որ միջնակարգ դպրոցի գերխնդիրն է անհատի կյանքին բազմակողմանի նախապատրաստելը: Ուրեմն՝ որքան շատ հայտնաբերվեն երեխայի հակումներն ու ընդունակությունները, այնքան մա ավելի ճիշտ կկողմնորոշվի իր հետագա կյանքում, ավելի քիչ սխալներ թույլ կտա: Այսինքն՝ աշակերտը հանդես կգա որպես ոչ միայն արտաքին ազդեցությունների օբյեկտ, այլև իբրև սուբյեկտ, ինքը կձևավորի իր անձը:

Մանկավարժությունը՝ որպես գիտություն, պարտավոր է ուսուցման և դաստիարակության գործընթացում ներդնի ամենաառաջավոր և սոցիալական նշանակություն ունեցող տեսություններ, որոնք կնպաստեն հզորացնելու հասարակության արտադրողական ուժերը, նրա մտավոր ներուժն ու մշակութային հարստությունը: Այդ ճանապարհին կարևոր երևույթ է համակարգիչների ներթափանցումը դպրոց: Այն կարևոր է նաև իբրև անհատական ուսուցման մեթոդ և միջոց: Բայց պետք է այնպես անել, որ համակարգիչների զանգվածային օգտագործումը չճնշի մտավոր ծուլություն, աշակերտին ետ չպահի մտածելուց, ստեղծագործելուց, դատողություններ անելուց, ընթերցանությունից:

Կրթությունը դադարներ չի ընդունում: Այն շարունակական գործընթաց է, և որքան օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներ լինեն կրթության ընթացքը ինչ-ինչ համազանցներով կաշկանդելու կամ վիժեցնելու համար (ինչպես այս օրերին կատարվում է մեր հանրապետությունում ազդերիցի ցնդիկ, շինծու շրջափակման հետևանքով), այնուամենայնիվ, հնարավորինս պետք է ձեռնարկել բոլոր միջոցները՝ դա թույլ չտալու համար: Այս դժվար օրերին դիմակայելու մեր փորձը հուշում է, որ մեր հանրապետությունում ձևավորվում է մարդկային նոր ընդհանրություն՝ ավելի տոկուն, կամային նոր որակներով օժտված, «Մեկը բոլորի համար, բոլորը՝ մեկի» սկզբունքը բառացիորեն յուրացրած, չհուսահատվող, թշնամու հիստերիան ատելու չափ արհամարհող ժողովուրդ, որ նպատակ չունի հրաժարվել շուրջ 3 տասնամյակ առաջ ընդունած սկզբունքներից:

Լևոն ԱՌԱՔԵԼՅԱՆ
գյուղ էմիջման

ՀԱՅ ՄԵՆԵՐ

ԱԶԲԻ ՊԵՍ ՊԱՐԶ, ԱԶԲԻ ՊԵՍ ԲԱՐԴ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ

Նվիրվում է Հովի. Թումանյանի մահվան 100-րդ տարելիցին



Ոչ ոք ուղիղը չի գտնելու չի ասելու երբեք: Հովի. Թումանյան

Մի առիթով Հովհաննես Թումանյանն ասել է. «Ծաղիկը դրված է մեջտեղը, մեղուն մեղր է քաղում, օձը՝ թույն»: Այժմ այդ ծաղիկը ինքը Թումանյանն է: Միմյանց ծայրահեղորեն հակադիր, չիմացությունից և սուբյեկտիվ ընկալումներից ծնվող մոտեցումներ ու կարծիքներ, զնահատակամներ, որոնք հեռավոր աղերս չունեն բանաստեղծի կյանքի, գործի ու աշխարհայացքի հետ: Նրան հռչակում են պացիֆիստ, բնորոշում են «լավ մարդ», «միամիտ», անհեռատես գործիչ, «քաղաքական երեխա», «քաղաքականապես զրո», որը չէր պատկերացնում, թե ով է իր ազգի դարավոր թշնամին, իսկ ոմանք նրան անվանում են իմաստուն ու անսխալական, ոմանք էլ կատեգորիկ հայտարարում են՝ «Չկան հավերժական ու անառարկելի մեծություններ»: Հետաքրքիր է՝ Մաշտոցը, Խորենացին, Նարեկացին ու նաև Թումանյանը ինչպիսի՞ մեծություններ են. ինչո՞ւ ենք կասկածի տակ դնում նրանց, ովքեր ազգային ոգու կրողն են, մեր ինքնության ցուցիչը, ինչո՞ւ ենք ջուր լցնում «ազգայինը կեղծ կատեգորիա է» հորջորջող և այսօր այդ նշանաբանով գործող անհայրենիք դավաճանների ջրաղացին:

Կարծում ենք շատերը, նույնիսկ կրթված, գիտական կոչումներ ունեցող գործիչներ, ավելին՝ քաղաքագետներ, ինչպես նաև իշխանական շրջանները մնացել են խորհրդային տարիների՝ Թումանյանի բարձրացրած «սպիտակ դրոշմ»-ի քարոզչության տակ, և իրենց կործանարար «խաղաղասիրությունը», Հայրենիքի հանձնումը ուզում են փաթեթավորել ազգային մեծագույն բանաստեղծի ու մտածողի հեղինակությամբ: Առաջին անգամ չէ, որ Թումանյանին ներկայացվում են անհիմն մեղադրանքներ: Նա երեք անգամ միայն բանտ է նստել հայ-թուրքական ընդհարումներ հրահրելու մեղադրանքով: Ի դեպ, 4 ազգերի պատկանող վկաներից Պետերբուրգի դատարանում միայն հայազգի վկան էր պահանջում Թումանյանին կախաղան բարձրացնել, մյուս ազգերի, այդ թվում՝ թուրք վկաները փաստում էին նրա անմեղությունը: Երբ Թումանյանը համագործակցում էր ԱՄՆ դիվանագիտական ներկայացուցիչ Հասկելի հետ, նրա վրա մատուցվում հարձակումներ էին գործում՝ թե նստում ու վեր է կենում իմպերիալիստների հետ: Իսկ Հասկելի հետ Թումանյանը առնչվում էր որպես Հայ որբերի հանգամակիչ կոմիտեի նախագահ:

Բանաստեղծի հեղինակության ետևում թաքնվում են նաև ազգի թշնամիները՝ նրան ներկայացնելով «հայ-թուրքական եղբայրության», հանուն «խաղաղության», իրականում՝ հանձնվելու, պարտվողականության դրոշակակիր լինելու մեղադրանք: Իրականում Թումանյանը քաջ գիտակցում էր իր ազգի շահը, Հայաստանի քարտեզը, գիտեր, որ իր Հայրենիքը քրիստոնյա կղզի է մահմե-

դական ծովում, և միայն ուժն ու զենքը, միտքն ու մշակույթը, նաև ազգային միասնությունն են ազգի գոյության հիմքը: Պատերազմի օրերին բանաստեղծի համար առաջնահերթություններ էին՝ գիտություն և զենք: 1917թ. նա երկու ընկերություն-հիմնադրամ էր ստեղծել. առաջինը «Հայկազյան»-ն էր, որը պետք է ապահովեր հայ գիտնականին ու դներ հայոց համալսարանի, ակադեմիայի հիմքերը: Երկրորդը «Կովկասյան ճակատին օգնող» ընկերությունն էր, որը հայ գիտնականին թե՛ զենքով, թե՛ հազուստով աջակցելու նպատակ ուներ:

ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆԸ

Ազգային միասնությանը նպաստում է ազգային ինքնության գիտակցումը, իսկ վերջինիս մեջ մեծ դեր է խաղում ընդհանուրը՝ պատմություն, մշակույթ, արտաքին թշնամի և այլն: Թումանյանը ազգային Մենք-ի կրողն էր, որը նախանձախնդիր էր ազգային ինքնության կենսունակության պահպանմանը:

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԽՈՉԸՆԴՈՏ

Թումանյանն ընդունում էր հեղափոխության գաղափարները, որոնք խոստանում էին բարեկեցություն, հավասարություն և այլն, բայց չէր ընդունում հեղափոխությունը՝ որպես այդ ամենին հասնելու ճանապարհ: Չէր հավատում հեղափոխական գործիչներին: «Ամբուն կլուն» քաղաքական-երգիծական պոեմում առկա են մասնավորապես գունավոր հեղափոխությունների տեխնոլոգիաները: Պոպուլիստ Աղվեսը, խաբեյով հիմար կկվին ու այլ կենդանիների, գայլի դեմ հեղափոխություն է կազմակերպում, հասնում իշխանափոխության և դառնում տիրակալ, բռնապետ՝ ավելի մեծ թալանի գայլի աստղծակով: Դժգոհ կենդանիներին աղվեսն ասում է. «Ինձ ընտրել եք... որ ես իրամայեմ-կիրամայեմ ձեր անունով»: Գաղափարական առումով բանաստեղծի պոեմը աղերսվում է Ջորջ Օրուելի «Անասնաֆերմա»-ի հետ, սակայն առաջադրված քաղաքական հարցադրումները շատ ավելի բազմազան ու տարաբնույթ են:

Թումանյանի համար բացարձակ անընդունելի էր հեղափոխությունը հատկապես հայ ժողովրդի համար, քանի որ այն ամենամեծ հարվածն էր ազգի միասնականությանը: Ըստ բանաստեղծի՝ ազգային-ազատագրական պայքարի համար զենք վերցնել կարելի է և պետք է, իսկ դասակարգային պայքարի համար՝ ոչ, քանի որ այն կարող է միայն խոչընդոտել ազգի համախմբմանը: Թումանյանը գրում է. «Պետք է սնունդ ու ծավալ չառնեն անմիբանության վատ ջանքերը... մեր սրբազան ձգտումի վայրկենին, պետք է համախմբվենք, մեր բոլոր ուժերը միացնենք»:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Բանաստեղծի կարծիքով ընտրաբաշխվելու նույնպես ազգը պառակտող գործոն են: Նա «վերջնական անկում» բնորոշում էր տալիս նախընտրական շրջաններին հատուկ այնպիսի տգեղ երևույթների, ինչպիսիք են հանուն փողի և անձնական կամ խմբակային շահի ժողովրդի անունը շահագործելով՝ անվերջ կեղծիքների ու խաբեությունների դիմելը, ռիսերիմ թշնամիների հետ «բարեկամանալը», անձնական նպատակներին մա-

մուլը ծառայեցնելը և այլն: Ընտրապայքարում սովորական դարձած կեղծիքի, ստի ու զրպարտության բազմաթիվ փաստերը բանաստեղծը բնորոշում է մի բառով՝ «զարհուրելի» է:

ԱՄԲՈՒՄ, ԺՈՂՈՎՈՐԴ, ԱՌԱՋՆՈՐԴ

Ազգային միասնությանը մեծ հարված է հասցնում ժողովուրդների ամբոխացումը: Իշխանափոխությունների մասին խոսելիս Թումանյանը կարևորում էր «ամբոխ», «ժողովուրդ», «առաջնորդ» եզրույթների քննությունը: Նա արձանագրել է ամբոխի մի շարք հատկանիշներ, որոնցից են՝

- ա) Ի տարբերություն ժողովրդի՝ ամբոխի պաշտամունքը նյութական է. դրա համար էլ «թալան» բառը հասարակության վրա ձեռք է բերում կախարհական ազդեցություն. «Խսավար ամբոխ, պաշտում ես դու լոկ փայլ ու փող»,- ասում է բանաստեղծը: Բ) Ամբոխը չի սիրում մտածել և գ) երբեք չի ընդունում իր մեղքը. «ամբոխներն ու ամբոխամիտ մարդիկ... ինչ էլ որ անեն, սիրում են մեղքը գցել ուրիշի վրա ու իրենց արդարացնել...»: Դ) «Ամբոխը «անգիտակից ու կույր» է այնքան, որ «ոչ իրեն է հասկանում, ոչ շուրջը, ոչ լավը, ոչ վատը, ոչ չարը, ոչ բարին»:

Ի վերջո այս ամենի հիման վրա Թումանյանը դասական սահմանում է տվել ամբոխին ու ժողովրդին՝ գրեթե գիտական ճշգրտությամբ գծելով նրանց միջև սահմանը. «Շատերը ժողովուրդն ու ամբոխը շփոթում են իրար հետ: Սրանք իրար հակառակ բաներ են: Ժողովուրդն իմաստուն է, ամբոխը՝ հիմար: Ժողովուրդը ծանր է, ամբոխը՝ թեթև: Ժողովուրդը մեծահոգի ու բարի է, ամբոխը՝ դյուրագրգիռ, վտանգավոր չար (ժողովուրդն աշխատանք է սիրում, ամբոխը՝ թալան), ժողովուրդը խաղաղասեր է, ամբոխը՝ կռվարար: Եվ ամբոխամիտ ու ամբոխավար մարդիկ երբեմն ամբոխի գլուխն անցնելով, որ մի շատ հեշտ բան է, տիրում են ժողովրդին ու նրան օգուն գանազան կրակների ու կռիվների մեջ, որ նա չի էլ երագել»:

Բանաստեղծը մատնանշել է նաև ամբոխահաճո առաջնորդներից սպասվող արհավիրքները ողջ ազգի համար: Նա զգուշացնում էր, որ՝ «ճառերը ընդունակ են միայն հարբեցնելու», մինչդեռ հայ ժողովուրդը «էնքան կարիք ունի զգաստ լինելու»: Մեկ այլ առիթով հավելում է. «Պետք է լռեն վերջապես բոլոր նրանք, որոնք խոսել են ու խոսում են ժողովրդի անունից... միմիայն մարդկանց աչքերին թոզ փչելու համար, կուրացնելու ու իրենց ետևից տանելու համար, իրենց համար առաջնորդողի դիրք ու աթոռ ստեղծելու համար»: Ժողովրդից ամբոխ-ի վերածվելու գործընթացում Թումանյանը նկատում է ևս մի առանձնահատկություն: Պատճառը ոչ միայն պոպուլիստ առաջնորդն է, այլև հասարակությունների՝ կրթության և քաղաքական երևույթների իմացության մակարդակը: Բանաստեղծը գրում է. «Ժողովուրդը երբեք լավ չի հասկացել, այժմ էլ լավ չի հասկանում և միշտ էլ լավ չի հասկանալու, նա միշտ նայել է իր մեջ զանազան միջոցներով անուն համաց գործիչների երեսին և գնացել է նրանց ետևից, և վայ էն ժողովրդին, որի գործիչները էնքան խղճմտանք չեն ունենալ, որ իրենց փոքրիկ անձերն ու կրքերը կդարձնեն հասարակության զբաղմունքի առարկա և իրենց չնչին անձնական հաշիվների շուրջը փոքրիկներ հարուցանելով կտան մեծ խնդիրների կերպարանք: Վայ էն ժողովրդին»:

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Երբ ժողովրդի անունը շահագործողները հասնում են իշխանության, ձևավորում կառավարություն, միանգամից իրենց անջրպետում են ժողովրդից: Բանաստեղծը փաստում է. «Իշխանությունը մարդկանց կուրացնում է, եթե մարդիկ ավելի փոքր են, քան իրենց պաշտոնը, հարբեցնում է, եթե ավելի տկար են, քան իրենց պաշտոնը», «Անհատներ կան, որոնք նշանավոր են միայն նրանով, որ մի բարձր պաշտոն ունեն... Առեք նրանցից այդ պաշտոնը... կտեսնեք օխորդ կորածի միմը»:

Գրեթե միշտ իշխանափոխությունները կատարվում են հանուն «արդարության»: Սակայն ինչպես Թումանյանն էր ասում. «Տվեք այդ արդարության անունով բողոքողներից ամենաթունոտին թեկուզ մի զոհի պաշտոն և կտեսնեք, թե ինչ պտուղ է, կամ ինչ է նշանակում նրա բերանում «արդարությունը»: «Մի շքանշանի, մի պատվի, մի պաշտոնի համար կմոռանան և՛ ժողովուրդ, և՛ եկեղեցի, և՛ Քրիստոս, և՛ Աստված»: Նրանց համար բարձր գաղափարների մասին խոսելը միայն սանդուղք է իրենց «փառք»-ի բարձրությանը հասնելու համար...»:

ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ

Վերջերս քաղաքական շրջանակներում հանդիպում ենք «Մի կաթիլ մեղր»-ի փիլիսոփայության մակերեսային վերլուծությունների: Եվ գարնանալիորեն հենց այս բալլադի համատեքստում Թումանյանին անվանեցին «քաղաքական երեխա», որի համար հայ-թուրք թշնամանքը զուտ «մի կաթիլ մեղր» է, իբր Թումանյանը չի հասկացել այդ թշնամանքի էությունն ու խորքը: Բալլադում դրսևորվել է պատերազմի՝ որպես քաղաքական գործընթացի հայեցակարգային մոտեցում: Առաջին հայացքից նկատում ենք միայն «ձնագնդի»-ի էֆեկտը», երբ յուրաքանչյուր նոր գործողություն ենթադրում է պատասխան մեկ այլ գործողության ակիբ: Սակայն մի կաթիլ մեղրը պատճառ չէր, այլ միայն առիթ՝ թագավորների համար պատերազմելու հանուն ունեցվածքի. («Ես գյուղերը հարկ են տալի/Ամեն միմը մի արքայի»): Երկու թագավորներն էլ պատերազմելու իրենց որոշումները ներկայացնում են զեղեցիկ փաթեթավորմամբ. «Ու Աստուծով Մեծակարող»//«Հանուն պատվի, արդարության», // Հանուն թափված անմեղ արյան, // Հանուն ազատ մեր աշխարհիքի, //...- Հանուն արդար ու սուրբ ռիսի»:

Բանաստեղծի խաղաղության դավանանքն է՝ չլինել նախահարձակ, բայց ցանկացած հարձակում ընդունել արժանապատիվ ու անզիջում պայքարով: Լռեցիների անունից Ղազախի թուրքերին ուղղված կոչում Թումանյանը հայտարարում էր, որ չեն ցանկանում կռվել, որովհետև՝ «Եթե ուժեղ ենք - անիրավություն է, եթե թույլ ենք, հիմարություն է... Իսկ եթե նրանք մեզ չեն լսիլ և կհարձակվեն մեր գյուղերի վրա... մենք ինքներս կգնանք նրանց դեմ և անխնայ»: Բազմաթիվ են թուրքերի դեմ զինված պայքարի մասին «պացիֆիստ» Թումանյանի վկայությունները: Բերենք միայն մի քանիսը.

1. 1989թ. գարնանը 20-ամյա Թումանյանը վաճառում է իր ամառային վերարկուն, զենք գնում, որպեսզի ազատագրի Արևմտյան Հայաստանը:
2. 1905-1906թթ. բանաստեղծը Լոռու գյուղերում կազմում է զինված հեծյալների խմբեր՝ թուրքերի դեմ զնալու համար:

ԳՐԱԴԱՐԱԿ

ՆՈՐ ԶԵՌՆԱՐԿՆԵՐ

3. Հայ-թուրքական ընդհարումների ամենաթեժ օրերին (1905-1906թթ.) կազմակերպում է զենքին լավ տիրապետելու մրցույթներ, «զորավարություններ», անձամբ մասնակցում և շահում առաջին մրցանակը՝ որպես հրացանաձիգ:

4. «159-ի գործի» քննչական նյութերում թունամյանի անունը հիշատակվում է զենքի ընդունման և տարածման մատյանում:

5. 1905թ. դեկտեմբերի 5-6-ը բանաստեղծը Քոլագերան կայարանում անձամբ է դիմավորում ռուսական Սևերսկի գունդը և այդ գնդի ու զենքի միջոցով կազմակերպում հայերի ինքնապաշտպանությունը:

6. 1914թ. և 1915թ. թունամյանը զենքով է գնացել Արևմտյան Հայաստան:

7. 1918թ. մայիսի 25-30-ը բանաստեղծը Ղարաքիլիսայում էր և տնօրինում էր զենքի բաշխման աշխատանքները:

8. 1920թ. Քենալական թուրքիան սեպտեմբերի 28-ից ծավալեց վճռական ռազմական գործողությունները: 2 օր անց 51-ամյա թունամյանը գրում է. «Եսօր քիչ էր մնում, թե ճանապարհ ընկնեի դեպի Ֆրոնտը», սակայն չի հասցնում, քանի որ նույն օրը հանձնվում է Կարսը, և սկսվում է հայկական զորքերի նահանջը:

ՀԱՅԻ ԴԱՐԱՎՈՐ ԹՇՆԱՄԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ

Դեմ առ դեմ թուրքի զազանություններին նա առերեսվեց հենց 1905-1906թթ. իր խաղաղարար առաքելության օրերին. 1905թ. երկու ամսում (նոյեմբեր-դեկտեմբեր) բանաստեղծն ապրեց «Չինգիզ խանի ու Լենկ Թեմուրի դարերը»: «Հիրավի, -ասում է թունամյանը,- այսքան տգեղ, այսքան լիրք, այսքան անիրավ, հրեշական կռիվ, ինչ որ թուրք-հայկականն է, դժվար թե եղած լինի: Գուցե նախապատմական ժամանակներում, երբ մարդիկ իրար ուտում էին»:

ՄԱՐԴ-ԳԱԶԱՆ


Թունամյանի ստեղծագործություններում բազմիցս արծարծվում է «մարդ-զազան» թեման: Նախատիպը թուրքն էր: Դ.Դեմիրճյանի հավաստիացմամբ, ամեն անգամ, երբ բանաստեղծը պատմում էր թուրքերի զազանությունների մասին. «Չայնի մեջ դողում էր նույն ատելությունը»: Թունամյանը երբեք չի վստահել թուրքի ո՛չ խոսքին, ո՛չ խոստումներին. «Ես չեմ հավատացել ու չեմ հավատում թուրքի բարի հայտարարություններին», «Թուրքիան մնում է նույն հին թուրքիան»:

1914թ. դեկտեմբերին և 1915թ. գարնանը թունամյանը Արևմտյան Հայաստանում էր, և իր աչքերով է տեսել «ավերակների ու դիակների աշխարհը»: Բերանն արնոտ անբան մարդակերը նույնպես թուրքն է: Եվ «1000 դարում Մարդակերից հազիվ Մարդասպան» դարձած թուրքը «դեռ հեռու է Մարդ դառնալ»-ուց: Նույն միտքը տեսնում ենք և «Հոգեհանիզատ»-ում («Մարդակեր զազան մարդը դեռ երկար էսպես կըմնա...»): Թունամյանը վստահ էր, որ դեռ հեռու է մինչև Մարդը թուրքի ճամփան, և ընդհանրապես հույս չուներ, որ թուրքը կթողնի իր թրքությունը: Թուրքի հանդեպ այլ մտտեցում չէր կարող ունենալ մի բանաստեղծ, որին առաջնորդողը ազգային գաղափարախոսությունն էր: Նժդեհը հայոց սրբազան լեռը՝ Մասիսն էր համարում հայ հոգու դայակը: Պատահական չէ, որ մենք տեսնում ենք բիբլիական Արարատի խորհրդանիշը 1915թ. գրված «Հայրենիքիս հետ»-ի տողերում. «Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին.../Կենսաժողովիս իր շողերը պիտի ժղպտան առաջին»: Արարատի լանջին է հայ ժողովրդի ասպազան, «նոր ու հզոր» Հայրենիքի տեսլականը, Մասիսի շուրջը պիտի ազգը կերտի իր ասպազան մեծ համախմբումի միջոցով: Հայրենիքի աշխարհագրությունը չպետք է փոխվի: Այսպիսով աշխարհասփյուռ հայության հայացքը բանաստեղծը սևեռում է դեպի բիբլիական սարը:

1923թ. մարտի 23-ին Մոսկվայի հիվանդանոցում հոգեվարքից մեկ-երկու ժամ առաջ վաղ առավոտյան Ամենայն հայոց բանաստեղծը արտաբերեց իր վերջին նախադասությունը՝ ուղղված ինչպես զավակներին, այնպես էլ իր ժողովրդին ու առհասարակ մարդկանց՝ «Դո՛ւնա՛ղ կացե՛ք»: Բազում փոթորիկների ու աղետների, ազգային ու անձնական ողբերգությունների միջով անցած բանաստեղծը, որն առաջիններից էր, որ ի պաշտպանություն Արցախի իր կազմակերպած հանրահավաքում ի լուր աշխարհի հայտարարեց, որ «Ղարաբաղը երբեք չի եղել ու չի լինելու Ադրբեջանի կազմում», կյանքից հեռանալիս պատգամեց քաջ ու խիզախ լինել:

Ստաննա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ «Հրապարակ» օրաթերթ


Վաստակաշատ ուսուցչուհի Ռոմեա Դադայանը Արցախի կրթական համակարգի երախտավորներից է, ԱՀ վաստակավոր մանկավարժ: Մանկավարժական գործունեության բազում



տարիների ընթացքում նա իր անգնահատելի ներդրումն է ունեցել Ստեփանակերտի հ. 1 դպրոցի արդյունավետ գործունեության ապահովման գործում, գործընկերներին շնայլորեն բաժին հանել տարիների իր փորձը, կրթել ու դաստիարակել սերունդներ, որոնք երախտագիտությամբ են հիշում նվիրյալ ուսուցչուհու անունը:

Ռ. Դադայանը նաև ստեղծագործող ուսուցչուհի է, մի շարք ձեռնարկների հեղինակ: Այսօր էլ թոշակառու ուսուցչուհին բազում մտահղացումներ ունի: Հրապարակի վրա են անխոնջ ման-

կավարժի «Հայերենի քերականությունը գծապատկերներով և աղյուսակներով» և «Մայրենի-5: Աշխատանքային գրքույկ» ուսումնասիրողական ձեռնարկները՝ սահմանափակ տպաքանակով: Նրանցում ընդգրկված նյութերն արդիական են, գործող ծրագրերին համապատասխան, պահպանված է ուսումնասիրվող նյութի հաջորդականությունը, յուրաքանչյուր գծապատկեր իր սեղմության մեջ նաև սպառիչ է: Քերականա-



կան նման աղյուսակներն ու գծապատկերները հնարավորություն են ընձեռում անցած թեմաները համեմատելու, ընդհանրացումներ կատարելու:

Տարիներ ի վեր մայրենիի ուսուցիչներն իրավացիորեն բողոքել են 5-րդ և 6-րդ դասարանների միասնացված դասագրքերում ընդգրկված առաջադրանքների սակավությունից: Հաճախ ուսուցիչը բնագրում չէր գտնում քե-

րականական նյութի յուրացման համար անհրաժեշտ բառեր ու արտահայտություններ: Եվ ահա 5-րդի համար նախատեսված սույն աշխատանքային գրքույկը գալիս է լրացնելու այդ բացը: Ընդգրկված վարժությունները, ստեղծագործական ու խմբային աշխատանքները նպաստում են սովորողների գրավոր և բանավոր խոսքի զարգացմանը, բառապաշարի հարստացմանը: Օրինակներն ընտրված են ճիշտ ու տեղին, հիմնականում՝ գեղարվեստական

գրականությունից: Դրանք նաև դաստիարակելու միտում ունեն:

Ձեռնարկները հիանալի նվերներ են դպրոցականների, դիմորդների համար՝ լեզվական նյութը դիտողական ու առավել ընկալելի դարձ-

նելու առումով: Վստահ են, որ դրանք սեղանի գիրք կդառնան մեր մանկավարժների համար:

Հաջողություն մաղթենք վաստակաշատ ուսուցչուհու հայանպաստ ու հայաշունչ ստեղծագործական նոր մտահղացումներին:

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀ ԿԳՄՍ նախարարության կրթության պետական տեսուչ

ՈՒՇԱԳՐԱՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՄԻՇՃԱՆԻ ԴՊՐՈՅՈՒՄ

Շրջափակումը, կամ՝ ավելի վառ հնչող բլրկադան, իր ողջ եռթամբ, կամ նման վիճակի մեջ հայտնվելը նորություն չեն մեզ՝ վերջին երեք տասնամյակները թոհուրեթուկ անցած, տարաբնույթ արհավիրքներ հաղթահարած ժողովրդիս համար: Մենք ավելի ու ավելի ենք համոզվում, որ թշնամու քաղաքական, բարոյական, հոգեբանական ճնշումները որևիցե շոշափելի արդյունքներ չտվեցին բնապահպանների մուշտակ հագած բորենիներին: Մինչդեռ ավելի ենք համոզվում, որ քանի դեռ շրջափակման մեջ ենք, կտրված արտաքին աշխարհից, մեր ինքնության հիմքերն անրապնդելու լավագույն միջոցներ են ապավինելը մայրենի լեզվին, հավատքին, պետականությանը: Այդ նպատակն էր հետապնդում միջոցառումների շարքը մեր՝ Եմիշճանի հիմնական դպրոցում: Դրանց անցկացումը միաժամանակ վկայում է, որ անկախ դժվարություններից, կյանքը հանրապետությունում ընթանում է բնականոն հունով:

Փետրվար ամիսը հագեցած է նման միջոցառումներ կազմակերպելու առումով: Առաջինը (միջոցառումները կազմակերպել և անց է կացրել հայոց լեզվի և գրականության վաստակաշատ ուսուցչուհի Սոնա Նասիբյանը) նվիրված էր Հ. Թունամյանի ծննդյան օրվան՝ փետրվարի 19-ին: Դա միաժամանակ դարձել է Գիրք նվիրելու սիրելի տոն, որը որպես Գրքի, ընթերցանության պրոպագանդան միջոց ավելի ու ավելի հոգեհարազատ է դառնում: Թունամյանի ծննդյան օրը Գիրք նվիրելու օր դարձնելու ավանդույթը նախածեռնել էր ՀՀ գրողների միության նա-

խագահ, երջանակահիշատակ Լ.Ամենայանը:

Հաջորդ միջոցառումը նվիրված էր Մայրենիի օրվան՝ «Մեր լեզուն մենք ենք, որ կանք» խորագրով: Մայրենի լեզուն անաղարտ պահելը, հարստացնելը, որպես սրբագույն մասունք սերունդներին փոխանցելը բոլորիս պարտքն է: Միջոցառումներին ակտիվորեն մասնակցեցին աշակերտները: Նրանք իրենց ամուսնում մեկ անգամ ևս հաստատեցին, որ կանք, կլինենք ու դեռ կշատանանք: Դա է մեր պայքարի նշանաբանը:

Խոսք եղավ նաև Փետրվարի 20-ի մասին: 35 տարի առաջ հենց այդ օրը մեկնարկ տրվեց մեր երազանքների իրականացմանը, մեր ազգային զարթոնքին:

Փետրվարը, բնականաբար, եկեղեցական տոների ամիս է: Ս. Սարգսի տոն, Տեառնդառաջ, Բարեկենդան, Մեծ Պահք: Այս օրերի մասին էլ աշակերտները բավականին իրազեկված են:

Ուսուցչուհին, ներկայացնելով Ամենայն հայոց բանաստեղծի գրական վաստակը, հասարակական գործունեությունը, նրա մատուցած ծառայությունները ազգին, մայրենի լեզվի հարստացմանը, ավանդեց նաև թունամյանի ամենավերջին պատգամը՝ «Դո՛ւնա՛ղ կացե՛ք»:

Իսկ մենք պարտավոր ենք գիտակցել ու չմոռանալ, որ դժվարությունների հաղթահարման ամենահուսալի բանալին հույսն է, որը չի թողնում, որ մարի նպատակին հասնելու համար պայքարի բոցը:

Լ. ԱՍԱՔԵԼՅԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՄԻԱՅՆ ԳՐԱԳԵՏ ՍԵՅՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՉԻՆՈՒՄ ԵՍՏՄԱԿ ՌԻՍԿԸ ԵՐԿՐԱՇԱՐԺԱՎՏԱՆԳ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ



վող շինարարական արտադրության տարբեր պրոցեսների և աշխատանքների: 1997-2000թթ. աշխատել է «Հայկոմուննախագիծ» նախագծային ինստիտուտի «Ստեփանակերտ» դուստր-ձեռնարկությունում՝ որպես ինժեներ-նախագծող:

2000-2007թթ. տարբեր պաշտոններով աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն» ՊՈԱԿ գործակալության «Սեյսմիկ պաշտպանության արևելյան ծառայություն» կազմակերպությունում: 2002թ. աշխատելով Նշված կազմակերպությունում, միջազգային համագործակցության ծրագրի շրջանակում գործողվել է «Տարբերային աղետների կառավարման համակարգի» ուսումնասիրության, փորձի ընդօրինակման և վերապատրաստման դասընթացների անցման նպատակով:

2005-ից մինչև 2008 թվականը դասախոսել է Արցախի պետական համալսարանում:

2007-2008թթ. եղել է «Շրջանակ» ՄՊԸ նախագծային կազմակերպության համահիմնադիրը և գործադիր տնօրենը: 2009-ից մինչև 2020 թվականը ներառյալ աշխատել է ԱՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության նախարարությունում՝ իրականացնելով տարբեր բնույթի գործառնություններ (մասնակցություն «Քաղաքաշինության նախարարության եռամսյա ռազմավարությունը» փաստաթղթի մշակմանը, պատերազմից տուժած բնակելի շենքերի, շինությունների նորոգման, վերակառուցման և վերականգնման հետ կապված նախագծանախաշարքային փաստաթղթերի մշակում միջգերատեսչական հանձնաժողովների կազմում), մասնավոր և այլ կարգի սուբյեկտների ներդրումային պարտավորությունների ստուգում և այլ տիպի գործընթացներ: Քաղաքաշինության նախարարությունում աշխատանքի տարիներին մասնակցել է ԱՀ քաղաքացիական ծառայության ծրագրի շրջանակներում կազմակերպված մի շարք վերապատրաստման դասընթացների:

2020 թվականից շարունակում է նախկինում իրականացվող դասախոսական գործունեությունը ԱՀ «Շուշի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամում:

Մեր գրուցակցին բախտ է վիճակվել համագործակցել աշխարհառակ գիտնական, երջանկահիշատակ Սերգեյ Բալասանյանի հետ, որը մշտապես ջանում էր պատրաստել աղետների կառավարման ոլորտի մասնագետներ:

Թուրքիայում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժը ստիպեց մեզ մեկ անգամ ևս անդրադառնալ մեր տարածաշրջանի սեյսմիկությանը: Այդ կապակցությամբ գրուցեցիք կիրառական երկրաշարժագիտության և սեյսմակայուն շինարարության ոլորտի մասնագետ, Շուշիի տեխնոլոգիական համալսարանի դասախոս Տիգրան ՍԱՅԻՅԱՆԻ հետ:

1997 թվականին ավարտել է Արցախի պետական համալսարանի ճարտարապետաշինարարական ֆակուլտետի «Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն» մասնագիտությամբ բակալավրիատի բաժինը: Այնուհետև, 2001-2003թթ. նույն մասնագիտությամբ սովորել է մագիստրատուրայում: Ասպիրանտական կրթությունը ստացել է 2003-2006թթ. ժամանակահատվածում՝ սեյսմապաշտպանության համակարգերի մշակման ու ներդրման բնագավառում մեծ ավանդ ունեցող, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս, ծագումով արցախցի Միքայել Մելքունյանի ղեկավարությամբ:

1996-1997 թվականների ընթացքում արտադրական ուսանողական պրակտիկայի շրջանակներում մասնակցել է ԼՂՀ քաղաքաշինության նախարարությանն առընթեր տարբեր համաշինարարական պետական ձեռնարկությունների կողմից մի շարք օբյեկտներում իրականաց-

- Պարոն Սայիյան, հայտնի է, որ երկրաշարժերից պաշտպանվելու լավագույն միջոցը դրանց նախապատրաստվելն է: Մեր տարածաշրջանում ի՞նչ քայլեր են իրականացվում այդ ուղղությամբ:

- Նախ և առաջ թույլ տվեք շնորհակալություն հայտնել «Լուսարար» թերթին ինձ ընծեռած հնարավորության համար՝ Հայաստանի և Արցախի Հանրապետությունների սեյսմակայուն շինարարության բնագավառի պրոֆեսիոնալ հանրության, ինչպես նաև մեր արցախյան հատվածի հասարակության լայն շրջանակների հետ կիսվել նշված ոլորտում առկա և ներկայիս վիճակի, ձեռքբերումների, թերությունների ու տեսանելի ապագայում պլանավորված միջոցառումներին վերաբերող հարցերով:

Պետք է ասեն, որ ցանկացած աղետ ինքն իրեն աղետ չի հանդիսանում, մինչև որ չի հանգեցնում մարդկային զոհերի ու նյութական կորուստների: Իսկ դրանք տեղի են ունենում մարդու սխալ վարքագծի պատճառով, հատկապես՝ խուճապի և սխալ գործողությունների հետևանքով:

Աղետը վնաս է պատճառում ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած երկրներին: Տարբերությունն այն է, որ զարգացող երկրները չունեն աղետներից պաշտպանվելու կայուն և բազմակողմանի մշակված համակարգ, այնինչ զարգացած երկրները, որոնց շարքին են դասվում, օրինակ՝ Միացյալ Նահանգները, Ճապոնիան, ունեն աղետների կառավարման հուսալի համակարգեր: Նշված զարգացած երկրներում այդ համակարգերը թույլ են տալիս սպասվող աղետից պաշտպանել իրենց բնակչությանը, շենքերը, շինություններն ու գույքը:

Այս առումով 1988թ. դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած Սպիտակի երկրաշարժը ցուցանիչ էր Հայաստանի համար: Մեծ ողբերգություն լինելով հանդերձ, երկրաշարժն ի ցույց

դրեց, ինչպես նշեցի վերևում, և՛ մեր բնակչության, և՛ մեր ողջ պետական համակարգի անպատրաստ լինելը նմանատիպ բնական աղետին:

Երբ խոսում ենք մեր երկու հանրապետություններում երկրաշարժից պաշտպանվելու ուղղությամբ քայլերի կամ միջոցառումների մասին, առաջին անհրաժեշտ և կարևոր քայլն են համարում նշել 1991թ. ՀՀ կառավարությանն առընթեր «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն» (ՄՊԱԾ) գործակալության ստեղծումը: Այնուհետև՝ ՄՊԱԾ-ի կողմից՝ «Հայաստանի Հանրապետության և Երևան քաղաքի տարածքների սեյսմիկ ռիսկի նվազեցման» պետական համալիր ծրագրերի, ինչպես նաև՝ «Հայաստանի Հանրապետության սեյսմիկ պաշտպանության մասին օրենքի» նախագծի մշակումը: Նշված ծրագրերը 1999թ. հաստատվել են ՀՀ կառավարության կողմից և նախատեսված է իրականացնել 30 տարվա կտրվածքով ժամկետում: Ներկայումս ծրագրերի շրջանակներում մշակված միջոցառումները տարբեր, սակայն ոչ բավարար ծավալներով իրականացվում են ՀՀ և ԱՀ տարածքներում:

Մեր տարածաշրջանը ուժեղ երկրաշարժերից պաշտպանվելու ուղղությամբ որպես հաջող իրականացված կարևոր քայլեր համարվում են «Սեյսմիկ ռիսկի նվազեցման» համալիր ծրագրի շրջանակում հայաստանյան և մեր մասնագետների կողմից ՀՀ և ԱՀ տարածքների համար առանձին-առանձին մշակված սեյսմիկ շրջանացման քարտեզները: Դրանք ճշգրտորեն արտահայտում են մեր տարածաշրջանի սեյսմիկ վտանգը և ուժեղ երկրաշարժերի պարբերականությունը: Վերջին մասնագիտական ուսումնասիրությունների համաձայն մեր տարածաշրջանի համար այդ պարբերականությունը կազմում է 30-40 տարի: Վերը նշված քարտեզները հիմք են մեր երկու հանրապետություններում սեյսմա-

կայուն շինարարության իրականացման համար:

Հարկ է նաև նշել, որ մինչև 1988թ. Սպիտակի աղետալի երկրաշարժը բոլոր շենքերն ու շինությունները նախագծվել և կառուցվել էին հիմնականում 7, իսկ որոշ դեպքերում՝ 8 բալ սեյսմիկ ինտենսիվության համար:

Երկրաշարժից հետո մշակված այդ քարտեզները ցույց են տալիս, որ Հայաստանի և Արցախի Հանրապետությունների տարածքների սեյսմիկությունը գնահատվում է 8-10 բալ ինտենսիվությամբ: Այս հանգամանքն իր հերթին խոսում է այն մասին, որ ԽՍՀՄ-ի օրոք մեր տարածաշրջանի սեյսմիկ վտանգի մակարդակը բավականին թերագնահատված էր, իսկ ներկայումս անհամեմատ բարձր է:

Պետք է տարբերակել «սեյսմիկ վտանգ» և «սեյսմիկ ռիսկ» հասկացությունները: Սեյսմիկ վտանգը, ինչպես ասացի, հավանական ուժեղ սեյսմիկ աղետի պարբերականությամբ պայմանավորված երկրաշարժի կրկնողությունն է ըստ տարիների, իսկ սեյսմիկ ռիսկը՝ սպասվելիք ավերիչ երկրաշարժի հնարավոր հետևանքների հաշվարկը (գնահատումը): Վերջինս պայմանավորված է մարդկային զոհերի, վիրավորների, անօթևան մնացած բնակիչների քանակով և շենքերի ու շինությունների փլուզման ծավալով:

Այսպիսով, բարձր սեյսմիկ վտանգն ինքնին հանդիսանում է բարձր սեյսմիկ ռիսկի աղբյուր:

Ամփոփելով Ձեր հարցադրման իմ պատասխանը՝ անհրաժեշտ են համարում նշել, որ ընդհանուր առմամբ բոլոր զարգացած երկրներում ցանկացած աղետի կառավարման համակարգ ունի չորս փուլ. նախապատրաստական, արձագանքման, հետևանքների մեղմացման և աղետի գոտու վերականգնման: Բնականաբար, նշված փուլերից երկրաշարժի նախապատրաստական փուլը համարվում է ավելի կարևոր, քան աղե-

տին պարբերաբար արձագանքման, նրա հետևանքների վերացման և աղետի գոտու վերականգնման փուլերի միջոցառումները: Իսկ արդեն նախապատրաստական միջոցառումներից ամենակարևորներն, իմ կարծիքով, ամուր և կայուն շենքերի նախագծումը, կառուցումն ու ճիշտ շահագործումն են:

- Եվ ի՞նչ արդյունքներ ունենք:

- Հաշվի առնելով, որ մեր տարածաշրջանում բարձր է ինչպես սեյսմիկ վտանգը, այնպես էլ սեյսմիկ ռիսկը, ՀՀ «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն» գործակալությունում մշակվել է «Սեյսմիկ ռիսկի արագ գնահատման» մեթոդիկա, որի հիման վրա հաշվարկվել է ՀՀ տարածքի, Երևան քաղաքի, ինչպես նաև ՀՀ տարածքում գտնվող՝ 50 000-ից ավել բնակիչ ունեցող այլ քաղաքների սեյսմիկ ռիսկը: Նշված մեթոդիկան օգտագործվել է նաև ԱՀ և Ստեփանակերտ քաղաքի սեյսմիկ ռիսկերի հաշվարկման ժամանակ:

Օրինակ՝ Ստեփանակերտ քաղաքի սեյսմիկ ռիսկի հաշվարկման նպատակով ողջ քաղաքի տարածքը բաժանվել է 10 թաղամասի, որտեղ շենքերի ու շինությունների նախօրոք իրականացված տեխնիկական վիճակի գնահատման նպատակով տվյալների հավաքագրման արդյունքում բոլոր շենքերը դասակարգվել են ըստ իրենց կոնստրուկտիվ լուծումների: Ունենալով վերը նշված տվյալները՝ յուրաքանչյուր կոնստրուկտիվ լուծում ունեցող շենքի համար հաշվարկվել է սեյսմիկ ռիսկը:

Մեթոդիկան հիմնվում է սեյսմիկ ռիսկի մեծությունը բնութագրող երեք գործոնների վրա.

1. ուսումնասիրվող տարածքի սեյսմիկ վտանգի և շենքերի սեյսմակայունության հարաբերությունը,
2. ցածր սեյսմակայունություն ունեցող շենքերով զբաղեցրած տարածքների մակերեսի հարաբերությունը ուսումնասիրվող ողջ տարածքի մակերեսին,
3. ցածր սեյսմակայունությամբ շենքերում բնակվող մարդկանց քանակի հարաբերությունը ուսումնասիրվող տարածքի ողջ բնակչության թվին:

«Սեյսմիկ ռիսկի արագ գնահատման» մեթոդիկայով իրականացված հաշվարկները ցույց են տալիս, որ թե՛ ՀՀ և թե՛ ԱՀ տարածքներում գոյություն ունեցող բոլոր տիպի շենքերն ու շինությունները գտնվում են կամ «ցածր», կամ «միջին» հուսալիության աստիճանների տիրույթում: Անհրաժեշտ է նշել, որ մեր երկու հանրապետություններում գոյություն ունեցող շենքերը տիպարային շինարարության ոլորտում կազմում են մեծ տոկոս, և նշված շենքերում բնակվում է մեր ազգաբնակչության մեծ մասը: Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ պարզ է դառնում, որ գոյություն ունեցող շենքերով կառուցապատված տարածքների սեյսմիկ խոցելիության գնահատումն ու հետևողական նվազեցումը հրատապ են, ակտուալ և ազգային անվտանգությանը անմիջականորեն վերաբերող խնդիրներ: Այսինքն՝ առաջին հերթին անհրաժեշտ է ուսումնասիրել և բարձրացնել նշված շենքերի սեյսմակայունությունը:

Ինչ վերաբերում է նոր նախագծվող և կառուցվող շենքերին, ինչպես նշեցի, ընդհանուր առմամբ նրանք իրականացվում են՝ հիմք ընդունելով մեր տարածաշրջանի նոր և ավելի բարձր սեյսմիկ վտանգն արտահայտող սեյսմիկ շրջանացման քարտեզները:

Իսկ եթե խոսում ենք միջազգային պրակտիկայում սեյսմակայուն շինարարության բնագավառում ժամանակակից և առաջատար տեխնոլոգիաների կիրառման մասին, ապա ներկայումս ՀՀ տարածքում հաջողու-

ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ

թյանը ներդրվել է օգտագործվում է մեզ համար նոր համարվող «սեյսմամեկուսացման համակարգ» անվանումով տեխնոլոգիան: Այն կիրառվում է ինչպես գոյություն ունեցող տարբեր կոնստրուկտիվ լուծումով շենքերի սեյսմակայունության բարձրացման, այնպես էլ նոր նախագծվող և կառուցվող շենքերի համար և իրենից ներկայացնում է շերտավոր ռետիկուլատիվ հեմարաններ, որոնցով սեյսմամեկուսացված շենքերը շատ ավելի հուսալի ու կայուն են երկրաշարժերի հանդեպ, քան ավանդական մեթոդներով ուժեղացված և կառուցված շենքերն ու շինությունները:

Տեխնոլոգիայի մյուս առավելությունն այն է, որ ուժեղ երկրաշարժի ժամանակ այն թույլ է տալիս շենքի վրա սեյսմիկ ազդեցությունները նվազեցնել մոտ 3 անգամ: Բացի այդ, սեյսմամեկուսացման համակարգերով ուժեղացված և կառուցված շենքերը դիմանում են 9 բալից բարձր ուժգնությամբ երկրաշարժերին:

Նշված տեխնոլոգիայի կիրառումը հնարավոր դարձավ շնորհիվ պրոֆեսոր Միքայել Մելքոնյանի, որը սկսած 1993 թվականից, Հայաստանում մշակել ու ներդրել է ռետիկուլատիվ հեմարանների (սեյսմամեկուսիչների) արտադրման գործընթացն ու դրանց կիրառումը 1-20 հարկ ունեցող շենքերի կառուցման, ինչպես նաև գոյություն ունեցող շենքերի ամրացման ժամանակ:

Ի դեպ, որպես հաջորդ արդյունք, մեծ նվաճում է արդեն արձանագրված փաստ, շեշտեն, որ պրոֆեսոր Մելքոնյանը իր գիտական և ճարտարագիտական աշխատանքներով աշխարհում մեկ շնչին ընկնող սեյսմամեկուսացված շենքերի քանակով Հայաստանը ճապոնիայից հետո բերել է երկրորդ տեղը:

Նշեն, որ հարգարժան պրոֆեսորը պարբերաբար այցելում է Արցախ, մենք հանդիպում և համագործակցում ենք:

- Ըստ Ձեզ, Արցախում, մասնավորապես Ստեփանակերտում իրականացվող կառուցապատումը որքանով է համապատասխանում սեյսմակայունության չափանիշներին: Ունե՞նք շենքեր, որոնք ամրացվում են, թե՛ ավելի շուտ դրանք քանդվում են:

- Ինչպես նշեցի, քանի որ Սպիտակի աղետալի երկրաշարժն ի ցույց դրեց, որ մեր տարածաշրջանի սեյսմիկ վտանգը թերագնահատված է, առանց լրացուցիչ ուսումնասիրությունների էլ պարզ է, որ գոյություն ունեցող շենքերի մեծ մասն ունի ամրացման կարիք: Իսկ բոլոր նոր շենքերը Հայաստանի ու Արցախի Հանրապետությունների տարածքներում պետք է նախագծվեն ու կառուցվեն համաձայն նոր մշակված սեյսմիկ վտանգի կամ շրջանացման բարտեզի, ինչպես նաև սեյսմակայուն շինարարության ոլորտում ներկայումս գործող շինարարական նորմերի ու կանոնների:

Հաշվի առնելով նշվածը՝ բնականաբար բարձրանում են գոյություն ունեցող և նախագծվող ու կառուցվող շենքերին ներկայացվող սեյսմակայունության պահանջները:

Ընդհանուր առմամբ, սեյսմակայուն շինարարության ոլորտի միջազգային պրոֆեսիոնալ հանրությունը լավ գիտի, որ աշխարհի ցանկացած երկրում շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման միջոցառումները համարվում են ամենածախսատար, աշխատատար և երկար ժամանակ պահանջող աշխատանքներ:

Ամիրաթեշտ է նշել, որ գոյություն ունեցող տարբեր տիպի շենքերի և շինությունների ուժեղացմանն ուղղված բազմաթիվ ավանդական եղանակներն արդյունավետ չեն, քանի որ պահանջում են նշված շենքերից բնակիչների ժամանակավոր տեղահանում: Ի տարբերություն շենքերի ուժեղացման ավանդական մեթոդների, «սեյսմամեկուսացման համակարգ»-ն ունի ևս մեկ առավելություն և հնարավորություն է ընձեռում իրականացնել

շենքի ուժեղացումը առանց բնակիչների տարհանման ու շենքի շահագործման դադարեցման: Բացի այդ, համեմատած մինչև օրս օգտագործվող ամրացման եղանակների հետ, վերը նշված սեյսմամեկուսացման համակարգով շենքի ուժեղացման ընթացքում իրականացվող շինարարամոնտաժային աշխատանքների արժեքը նվազում է 3-5 անգամ: Եվ այս առումով սեյսմամեկուսացման համակարգը անփոխարինելի է:

Հուրախություն բուրբիս, տեղեկացնեն, որ սեյսմամեկուսացման համակարգը ներկայումս հասել է նաև Արցախի Հանրապետություն: Շերտավոր ռետիկուլատիվ հեմարանների կիրառմամբ Ստեփանակերտ քաղաքում ունենք գրոյից կառուցված չորս հարկանի (ներառյալ մեկ նկուղային հարկը) երկաթբետոնե հիմնականաբար պոլիլինիդկայի նոր շենքը:

Ներկայումս Տիգրան Մեծի փողոցում գտնվող երեք 9 հարկանի խոշորապանել շենքերից մեկը, որը ժամանակին ճանաչվել է վթարային, ուժեղացվում է նշված տեխնոլոգիայով: 2022 թվականից մեկնարկել են Ստեփանակերտի Հովհաննես Թումանյան փողոցի թիվ 77 հասցեում գտնվող երկհարկանի բարե շենքի ուժեղացման շինարարամոնտաժային աշխատանքները: Նախագծով շերտավոր ռետիկուլատիվ հեմարանների միջոցով նախատեսվում են շենքի վերնակառուցի (0,00 միջից բարձր գտնվող հարկերի) անջատումը նկուղային հարկից, ֆունկցիոնալ նշանակության փոփոխությունը և ևս մեկ լրացուցիչ հարկի ավելացումը: Սակայն շրջափակումը և դրան հետևող հումանիտար ճգնաժամն ունեցան իրենց բացասական ազդեցությունը նաև շինարարական ոլորտի վրա, ինչի պատճառով էլ Արցախում ընդհանուր առմամբ շինարարությունը գտնվում է կանգնած վիճակում:

Ինչ վերաբերում է մեր հանրապետության տարածքում և Ստեփանակերտ քաղաքում ամրացման ու քանդման ենթակա շենքերին ու շինություններին, նմանատիպ որոշումը պետք է կայացվի միայն լիցենզավորված և մասնագիտացված կազմակերպության կողմից՝ ուսումնասիրվող շենքի տեխնիկական վիճակի գնահատման գործընթացի շրջանակներում կազմված եզրակացության հիման վրա:

- Ինչպես հասկացա, շատ քիչ են սեյսմակայուն նոր տեխնոլոգիաներով կառուցվող շենքերը:

- Համամիտ չեն այդ կարծիքին: Պրոֆեսոր Մ. Մելքոնյանի ակտիվ գործունեության արդյունքում մինչև օրս Հայաստանի և Արցախի Հանրապետություններում սեյսմամեկուսացման համակարգի կիրառմամբ նախագծվել է 60 շենք: Իսկ արդեն նախագծված շենքերի նշված ընդհանուր թվից ամրացված և կառուցված շենքերի ընդհանուր թիվը 56 է:

Ամիրաթեշտ է նշել, որ 60 նախագծված շենքերից երեք սեյսմամեկուսացված շենքերի նախագծերը նախապես վել են Արցախի Հանրապետությունում իրականացման նպատակով: Իսկ սեյսմամեկուսացման համակարգի կիրառմամբ Արցախում, ինչպես ասացի, արդեն ունենք մեկ կառուցված պոլիլինիդկայի շենք: Եվս երկու շենքերում արդեն մեկնարկել են շինարարամոնտաժային աշխատանքները:

Պետք է նշեն, որ թե՛ Հայաստանի և թե՛ Արցախի Հանրապետություններում նշված համակարգի կիրառման ու ներդրման ընթացքում հանդիպում ենք բազմաթիվ խոչընդոտների: Դրանք հիմնականում պայմանավորված են այն հանգամանքով, որ շինարարության բնագավառի պատասխանատու մարմինները շենքերն ու շինությունները երկար տարիների ընթացքում սովորել են կառուցել ավանդական, իսկ ներկայումս արդեն՝ հնացած մեթոդներով, ունեն կարծրացած մտածելակերպ և չեն ուզում իրաժարվել կառուցման

հին մեթոդներից և ընդունել նորարարական տեխնոլոգիաներ: Իսկ սեյսմամեկուսացման համակարգերի առավելությունների մասին ավելացնեն, որ դրանց միջոցով կառուցվող շենքերի արժեքը մոտ 40%-ով ավելի ցածր է, քան ավանդական և հնացած մեթոդներով կառուցվող շենքերի արժեքը:

Ամփոփելով Ձեր բարձրացրած հարցի պատասխանը՝ ուզում եմ նշել, որ ցանկացած երկրի կայուն և արժանապատիվ զարգացումը սերտորեն կապված է գիտության և նոր տեխնոլոգիաների զարգացման ու ներդրման հետ: Իսկ այս առումով նշված ոլորտների զարգացման նպատակով միանշանակ անհրաժեշտ է, որ պետությունը հատկացնի համապատասխան ֆինանսական միջոցներ:

- Իսկ ավելի նպատակահարմար չէ՞ շենքերը միանգամից կառուցել սեյսմամեկուսացման տեխնոլոգիայով, քան թե հետո դրանք ամրացնել:

- Իհարկե, այդպես ավելի ձեռնտու է. նախ, ինչպես արդեն նշեցի, սեյսմամեկուսիչներով կառուցված շենքի վրա իրականացվող ծախսերն ավելի քիչ են, քան ավանդական մեթոդներով կառուցվածի դեպքում: Կարծում եմ՝ ցանկացած պետություն պետք է շահագրգռված լինի խնայել իր ֆինանսական միջոցները, և այս դեպքում մենք խնայելու ենք, որովհետև ինչպես ասացի, նշված տեխնոլոգիայով շենքի կառուցումը կամ ուժեղացումը նվազեցնում է շինարարության ընդհանուր արժեքը և թույլ է տալիս խնայել բետոնի ու ամրանի ծախսերը: Մինչդեռ, ցավոք, մեզ մոտ նշված նորարարական տեխնոլոգիայով շենքերի կառուցման հարցում առայժմ շահագրգռվածությունը շատ քիչ է:

- Ինչո՞ւ:

- Իմ կարծիքով կառուցապատող կազմակերպությունների ներկայացուցիչները գերադասում են հին և ավանդական մեթոդներով աշխատանքը, քանի որ չեն տիրապետում նոր տեխնոլոգիաներով աշխատելու մշակույթին: Իսկ եթե ասվածին ավելացնենք այն, որ պատճառներից մեկն էլ կարող է լինել կոռուպցիան, ապա, կարծում եմ, հասկանալի կլինի, թե՛ ինչու:

- Ներկայումս ստեղծված է մի այնպիսի իրողություն, որ շինարարական կազմակերպություն են ստեղծում նաև պատահական և ոլորտի հետ առնչություն չունեցող մարդիկ՝ հաշվի առնելով նշված ոլորտում մասնագետների մեծ պակասը:

- Ճիշտ նկատեցիք և մատնանշեցիք ոլորտում առկա խնդիրներից ևս մեկը: Ամեն անգամ ցավ եմ ապրում նման խնդիրների առնչվելիս: Մենք Արցախի Հանրապետությունում գրեթե բոլոր ոլորտներում, այդ թվում նաև սեյսմակայուն շինարարության, ունենք որակյալ մասնագետների պակաս և պահանջարկ:

Պետք է նշեն, որ Ձեր կողմից մատնանշված հարցը մեր շինարարության ոլորտի արատավոր երևույթներից մեկն է: Իմ կարծիքով, խնդիրն ունի մի շարք պատճառներ: Առաջին պատճառը տեսնում եմ այն հանգամանքի մեջ, որ շինարարության ոլորտի պատասխանատու մարմիններն ու պաշտոնյաները (Քաղաքաշինության նախարարություն, Ստեփանակերտի քաղաքապետարան, Տեղական ինքնակառավարման մարմիններ) լիարժեք և ճիշտ չեն պատկերացնում իրենց ստանձնած պաշտոնների, դրանցից բխող պարտավորությունների, ինչպես նաև «շինարար» անվանումով մասնագիտության արժեքն ու կարևորությունը:

Հետևաբար, վերը նշած մարմինների կողմից տարբեր ուղղվածություններ ունեցող շինարարական կազմակերպություններ հիմնելու աջակցությունն են ստանում իրենց պես ցածր գրագիտություն և մասնագիտական որակներ ունեցող մարդիկ:

Լավ մասնագետը չպետք է ամեն գնով

ծգոյի զբաղեցնել որևէ պետական պաշտոն, քանի որ գիտակցում է դրա պատասխանատվությունը: Այս առումով մենք պետք է ունենանք այնպիսի պետական կառավարման համակարգ, որտեղ որակյալ մասնագետն առանց պաշտոն զբաղեցնելու էլ կարողանա օգուտ բերել և իր ժողովրդին, և իր պետությանը՝ դրանով ունենալով իր արժանի տեղը մեր երկրում:

Երկրորդ պատճառը համարում եմ որակյալ մասնագետի չպահանջված լինելը: Մենք տարբեր կրթական ու գիտական ծրագրերի շրջանակներում պատրաստում ենք սակավ թվով մասնագետներ: Սակայն միևնույն ժամանակ չենք ուղղորդում մասնագետներին իրենց հետագա զարգացման ու կատարելագործման գործընթացներում: Իսկ ժամանակակից աշխարհում սեյսմակայուն շինարարության բնագավառը նույնպես ապրում է բավականին արագ ու դինամիկ զարգացում: Հետևաբար, կարելի է ասել, որ մեր մասնագետները հետ են մնում ոլորտի նորարարական տեխնոլոգիաներին տիրապետելուց:

Եվ որպես երրորդ պատճառ ուզում եմ նշել այն հանգամանքը, որ մեր որակյալ մասնագետներն իրենց արժանապատիվ տեղը չգտնելով մեր հայրենիքում, լավ վարձատրվող աշխատանքի համար ստիպված են լինում մեկնել այլ երկրներ: Արդյունքում պայմանականորեն համարվող «դատարկ դաշտը» զբաղեցնում են միջին և ցածր որակի մասնագետները:

Ամփոփելով իմ պատասխանը՝ ասեն, որ ցածր կարգի մասնագետները ներգրավվում են մեր շինարարական ոլորտի գրեթե բոլոր փուլերի աշխատանքներում՝ նախագծում, փորձաքննություն, շինարարություն, տեխնիկական հսկողություն: Սա է մեր բնագավառում ներկայումս տիրող ընդհանուր պատկերը:

- Ո՞վ է ավելի շատ մեղավորը:

- Կարծում եմ՝ բոլորս, յուրաքանչյուրս ունենք մեղքի մեր բաժինը: Մեկն ի պաշտոնե թույլ է տալիս այդ երևույթները, մյուսն օգտվում է նշված հանգամանքից, իսկ երրորդը լռում է: Բոլորս պետք է ճիշտ կատարենք մեր պարտականությունները:

Ուժեղ երկրաշարժերը մեր տարածաշրջանում դեռ կլինեն, և այս հանգամանքը պետք է մեզ մշտապես զգոն պահի Մենք պետք է քննենք դրանով, արթնանանք դրանով, ինչպես որոշ զարգացած երկրներ, որտեղ գրեթե ամեն օր տեղի են ունենում փոքր ուժգնությամբ երկրաշարժեր, և բնակչությունը սովորել է դրանց ու կարողանում է ապրել նշված պայմաններում: Կարևորը՝ գիտակցել, որ ապրում են ակտիվ սեյսմիկ վտանգի և ռիսկի գոտիներում և մշտապես ու հետևողականորեն ձեռնարկել սեյսմիկ ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումներ:

Մեր տարածաշրջանի համար ինչպես պատերազմը, այնպես էլ երկրաշարժը աղետ են և այս առումով երկու դեպքում էլ անհրաժեշտ է ուսումնասիրել և ընդօրինակել միջազգային պրակտիկայում զգալի փորձ ունեցող երկրների՝ «Աղետների կառավարման համակարգ»-ի շրջանակներում մշակված միջոցառումները:

Ամփոփելով խոսքս՝ ուզում եմ ասել, որ չնայած մեզ պատուհասած արհավիրքներին, ես հավատում եմ մեր ժողովրդի ողջամտությանը, կամքին ու համարձակությանը: Հայ ժողովուրդը դեռ կբարձրածայնի մեծ կշիռ ունեցող իր խոսքը: Մենք այլ ելք չունենք և պետք է հաղթենք:

Եվ թող Մեր Տեր ԱՍՏՎԱԾՆ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՈՒ ՊԱՅՎՊԱՆ ԼԻՆԻ ՄԵՐՈՂՋ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ ԻՐ ՀԱՅՐԵՆԱՆՊԱՍՏ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ԵՎ ԲԱՐԵԲԵՐ ԳՈՐԾԵՐՈՒՄ:

Հարցազրույցը՝ Սվետլանա ԽԱՀԱՏԻՅԱՆԻ

ԱՊՐԵԼԱԶԵԿ

ԱՐՑԱԽԸ ՄԵՐ ՄՐՏՈՒՄ



Քույր ու եղբայր եռնա եւ Դավիթ Սարգսյանները ծնվել են Ստեփանակերտում՝ արվեստագետի ընտանիքում: Նրանց հայրը ճանաչված նկարիչ-քանդակագործ, Արցախի եւ Հայաստանի նկարիչների միության անդամ, բազմաթիվ խորհրդանշական քանդակների հեղինակ Ալբերտ Սարգսյանն է: Ստեփանակերտում տեղադրված նրա քանդակներից են հայտնի «Մուսա» (Քաղաքաշինության նախարարության շենքի մոտ) եւ «Ընտանիք» («Արեւիկ» բուժմիավորման մանկական հիվանդանոցի շենքի մոտ) քանդակները: Ալբերտ Սարգսյանի հեղինակային քանդակների մեծ մասը, ցավոք, անցել է Ադրբեջանի տիրապետության տակ եւ արժանացել վայրագ ոսոխի քմահաճույթին: Ալբերտ Սարգսյանը կյանքից հեռացել է 2018 թվականին, հուղարկավորվել հայրենի Ալնադըյուր գյուղում (Ասկերանի շրջան): 2020թ. Արցախի դեմ Ադրբեջանի սանձազերծած լայնածավալ պատերազմի ընթացքում գյուղը անցել է թշնամու վերահսկողության տակ՝ շատ-շատերին թողնելով առանց տուն ու տեղի, գրկելով իրենց բաժին հայրենիքից, իսկ շատերին էլ՝ իրենց հարազատների շիրիմներին այցի գնալու հնարավորությունից:

Լինելով տաղանդաշատ, խելացի, պարկեշտ ծնողների զավակներ՝ եռնան ու Դավիթը նույնպես առանձնանում են խելացիությամբ եւ տաղանդով: Եռնա Սարգսյանը (ծնվ. 1985թ. սեպտեմբերի 3-ին) ավարտել է ԱրԴՀ կիրառական մաթեմատիկայի բաժինը: Մտել է աշխատանքի ԱԶ փրկարար ծառայությունում: Սիրելով ծառայությունը եւ մարդկանց օգնելը՝ հնտացել է նախընտրած մասնագիտությամբ՝ ավարտելով Երեւանի Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան: Մինչեւ 2020 թվականի նոյեմբերը՝ շուրջ 13 տարի, ծառայել է ԱԶ ԱԻԴԾ-ում: Դավիթ Սարգսյանը (ծնվ. 1988թ. հունիսի 8-ին) հոր պես նկարիչ-քանդակագործ է: Ավարտել է Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիայի քանդակի բաժինը: Արցախի եւ Հայաստանի նկարիչների միության անդամ է: Գանձասարի մուտքի մոտ տեղադրված «Մեքրոպ Մաշտոց» քանդակը նրա ծեռքի գործն է: Դավիթ Սարգսյանը մինչեւ 44-օրյա պատերազմը դասավանդում էր Ստեփանակերտի եւ Շուշիի արվեստի դպրոցներում: Սեպտեմ-

բերի 27-ին Դավիթը մեկնեց ռազմաճակատ, մասնակցեց Արցախի պետական սահմանը պաշտպանելու համար մղված մարտական գործողություններին:

2020թ. նոյեմբերի 9-ին Արցախի ու արցախցիների համար ճակատագրական փաստաթուղթն ստորագրվելուց հետո եռնան ու Դավիթը այլեւս չկարողացան մնալ Արցախում՝ համարելով, որ իրենց բաժին Հայրենիքը կորցրել են. հայրենի գյուղն ու հարազատների շիրիմներն այլեւս թուրքի քմահաճույթին են պատկանում: Նրանք իրենց մոր հետ տեղափոխվեցին Երեւան:

Կյանքը փոխվել էր, մասնատվել ու վերածվել «նախքան պատերազմը» եւ «պատերազմից հետո» դրվագների: Որպես Հայրենիքի հանդեպ խեղդող կարոտը փարատելու միջոց՝ Դավիթն ընտրեց ստեղծագործելը: Հիշողությունները խմբավորելով՝ սկսեց նկարել հայրենի Ալնադըյուր գյուղը, կենտրոնացավ գյուղի խորհրդանշական հանդի-

շապիկների վրա տպագրելու եւ վաճառքի գործով պաշտոնապես զբաղվելու համար:

Դավիթն ու եռնան որոշեցին իրենց կարողությունները ներդնել օգնել հայրենակիցներին՝ կորցրած Արցախի կարոտն իրենց սրտում պահելով:

Դավիթ Սարգսյանն օգտագործել է հնարավորությունն ու արտերկրում ներկայացրել իր աշխատանքները, որից ստացված հասույթը նվիրաբերել է 44-օրյա պատերազմում վիրավորված ազատամարտիկների պրոթեզավորման գործընթացի կազմակերպմանը: 2021թ. օգոստոսին Դավիթ Սարգսյանը Պրահայում մասնակցել է նկարների ցուցահանդես-վաճառքի, որտեղ ներկայացրել է իր գործերից չորսը եւ յուրաքանչյուրից ստացված 300-ական եվրոն ուղղել է վերոնշյալ բարեգործությանը:

Փետրվարի 26-ին Երեւանում կայացած տարատեսակ արտադրանքներով ցուցահանդես-վաճառքին մասնակցած ձեռներեցների մեջ էր նաեւ «Սարգսյան» բրենդը ներկայացնող եռնա Սարգսյանը: Նրա մեկնաբանմամբ՝ «Եվրասիա» միջազգային համալսարանը սիրով պատրաստակամություն էր հայտնել աջակցելու կին ձեռներեցներին՝ իրականացնելու «Արցախը մեր սրտում» խորագիրը կրող բարեգործական ցուցահանդես-վաճառքը, որի նպատակն էր հարթակ տրամադրել տեղահանված եւ Հայաստանում բնակվող արցախցի կին ձեռներեցներին՝ իրենց աշխատանքները ներկայացնելու հանրությանը, իսկ վաճառքից ստացված հասույթով գնել փայտի վառարաններ տեղահանված ընտանիքների համար:

«Մեր գործունեության հիմքում հայրենիքի հանդեպ կարոտն է ու մեր հայրենակիցներին ինչ-որ չափով օգնելու ցանկությունը: Մենք պատրաստ ենք Արցախը մայր Հայաստանին կապող կյանքի ճանապարհը բացվելու պես շարունակել պատվերներ ընդունել նաեւ Արցախից ու առաքել կորցրած մեր Հայրենիքի մասնիկները խորհրդանշող նկարներով որակյալ շապիկներ: Չկա Հայաստան՝ առանց Արցախի: Այդ խորհուրդն է կրում դրոշի տեսքով պատկերված «Սրտի զարկ» նկարը, որի հանդեպ հանրության ուշադրությունը ավելի շատ է: Եղբայրս իր այդ ստեղծագործությամբ արտահայտել է այն միտքը, որ Հայաստանի սրտի աշխատանքը դադարում է Արցախի կորստից հետո: Նկարում պատկերված է սրտի կանգ դրոշների տեսքով: Մենք պետք է ամեն քայլի դիմենք Արցախն ու Հայաստանը հայկական պահելու համար: Գուցե եւ մեր քայլերը փոքր-փոքր են, բայց եւ արվեստի մի մասնիկը կրելով մեր հայկական շապիկների վրա՝ խոսում ենք մեր յուրատիպությունը, հայկական ինքնությունը պահելու եւ արժեւորելու ցանկության մասին»,- ասել է եռնա Սարգսյանը:



ասացող հայտնի ընկույզի ծառի պատկերման վրա եւ արարեց հիանալի գործ՝ «Ճղպարեն»: Եռնան ու Դավիթը որոշեցին հարազատ ընկույզնու նկարով շապիկներ պատրաստել ու նկարի տեսքով կրել իրենց հազուստի վրա: Սկզբում պատրաստեցին երկու շապիկ իրենց համար: Նկատելով, որ կողքից մարդկանց հետաքրքրությունն ավելանում է մեան աշխատանքի նկատմամբ, սկսեցին նույն շապիկներից պատրաստել եւ նվերներ անել ցանկացողների համար: Երբ եկավ վայրագ ու կործանարար թուրքի ձեռքով Շուշիի Դազանչեցոց եկեղեցու գմբեթը պոկելու եւ քանդելու չարաբաստիկ օրը, Դավիթն իր հույզերն արտահայտեց «Դազանչեցոցի գմբեթ» նկարի ստեղծագործմամբ, որը եւս տեղ գտավ շապիկների վրա: Արցախի թեմատիկայով նկար-գործերը՝ պատկերված սկզբունքորեն հայկական բարձրակարգ կտորից կարված շապիկների վրա, մեծ հետաքրքրություն առաջացրին մեր հայրենակիցների շրջանում: «Ճղպարեն»-ին ու «Դազանչեցոցի գմբեթ»-ին հաջորդեցին «Կանաչ ժամ», «Ձնտիկներ», «Սրտի զարկ» ստեղծագործությունները, որոնց նկատմամբ մեծ հետաքրքրությունն ու պահանջարկն առիթ դարձան պատվերներ ընդունելու, եւ «Սարգսյան» բրենդը կրող անվանման ներքո Դավիթ Սարգսյանի բացառապես ձեռագործ աշխատանքները բարձրակ

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

Շնորհավորանք

ԿՈՉՈՒՄԸ՝ ՈՒՍՈՒՑԻՉ



Ուսուցիչ, անձ, որի օգնությամբ աշակերտները ձեռք են բերում գիտելիքներ, թևեր են առնում՝ կյանքի ծովում ազատ ու անկախ նավարկելու, աշխարհ տեսնելու և առեղծվածներ պարզելու համար:

Նա ծնվել է ուսուցիչ լինելու հունդերն իր մեջ կրելով: Քանի՜-քանի անգամ են բոցավառվել նրա աչքերը Չարենցի բանաստեղծություններն արտասանելիս, քանի՜ անգամ է ինքնամոռաց պատմել՝ չզգալով դասի ավարտն ու հնչող զանգը:

Նելլի Սկրտչյանը քիչ է ասել սիրում

է իր մասնագիտությունը:

Ծնվել է 1963թ. փետրվարի 26-ին՝ Ստեփանակերտում: Ավարտել է Ե.Չարենցի անվան հ. 7 միջնակարգ դպրոցը, 1985-ին՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը: Տարբեր կոլեկտիվներում աշխատելուց հետո 2014-ին աշխատանքի է անցել Ե.Չարենցի անվան հ. 7 դպրոցում, որտեղ ղեկավարում է նաև հայոց լեզվի և գրականության մասնախումբը: Որտեղ էլ աշխատել է, նվիրվել է ինքնամոռաց, սիրել աշակերտներին ու գործընկերներին: Բարի և կամեցող բնավորության շնորհիվ նա դարձել է շրջապատի սիրելին: Իր գործին նվիրված մանկավարժը սաների հոգում վառել է սեր հայ գրականության հանդեպ: Իսկ մայրենիի հանդեպ սերը նրա համար կարևորագույնն է:

Սիրված ուսուցիչ և ընկեր է Նելլի Սկրտչյանը, հոգատար և քնքուշ մայր, գթառատ տատիկ:

Ահա քանի տարի՝ Նելլի Սկրտչյանի գործն ու խոսքը հրաշքներ են գործում. նա Հայրենիքին տալիս է ազգասեր ու հայրենամուկ քաղաքացիներ: Նրա սաները աչքի են ընկնում իրենց բանիմացությամբ և բազմակողմանի զարգացածությամբ: Այսօր էլ նա մեծ սիրով, եռանդով շարունակում է մատաղ սերնդի դաստիարակության սուրբ գործը:

Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցի ողջ կոլեկտիվը շնորհավորում է սիրելի գործընկերոջը 60-ամյա հոբելյանի կապակցությամբ, ցանկանում նրան բեղմնավոր աշխատանք, բաղձալի խաղաղություն, ամբողջական հայրենիք, երջանիկ կյանք:

Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7 հիմն. դպրոցի կոլեկտիվ

ՇՆՈՐՀԱՎՈՐ ԶԵՐ ՏՈՆԸ, ՍԻՐԵԼԻ ԿԱՆԱՅՔ



Ի սրտե բարեմաղբանք Արցախի Հանրապետության ողջ ուսուցչական կազմին

Մեր շատ սիրելի ուսուցչուհիներ, կանայք և աղջիկներ, ջերմորեն շնորհավորում են ձեզ Կանանց տոնի միանյակի կապակցությամբ: Մեր և երջանկություն են մաղթում:

Դրանք են կարևորն այս կյանքում, և թող կատարվեն ձեր բոլոր երազանքները: Թող որ երջանկությունը միշտ ապրի ձեր սրտերում: Կանացի հմայքը, պայծառ ժպիտը, քնքշությունն ու գրավչությունը հավերժ ձեր ուղեկիցը լինեն:

Հայ կինը միշտ եղել է հայկական օջախի և մեր ազգի հենարանը, և նրանով է պայմանավորված հայ ազգի հարատևությունը: Հայ կինն իր նվիրվածության, անձնագոհության, սիրո, իմաստության և տոկունության շնորհիվ միշտ վառ է պահել հայ օջախի կրակը, ինչպես նաև պահպանել է ավանդույթներն ու ազգային արժեքները: Նրա դերը մեր կյանքում անզնահատելի է, ու դա անհերքելի է:

Պատահական չէ, որ այս գեղեցիկ տոնը գարնանն է, քանզի դուք՝ սիրելի կանայք, աղջիկներ, մայրեր և քույրեր, գարնան արևի պես տաքացնում եք մեր սրտերը, գարնան բուրավետ ծաղիկների պես գեղեցիկ, հմայիչ, նուրբ ու քնքուշ եք, տարվա բոլոր եղանակներին դուք միշտ գարուն եք բերում ու տարածում ձեր շուրջը: Եվ թող որ միշտ շրջապատված լինեք մարդկանցով, ովքեր զնահատում, սիրում ու հարգում են ձեզ, ում համար դուք թանկ եք ամեն ինչից, և թող ժպիտը ձեր դեմքից անպակաս լինի:

Լ. ԱՐԶԱՆԳՈՒԼՅԱՆ
Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան հ.2հ/դ
աշխարհագրության ուսուցչուհի

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՌԻՍՈՒՑԶԻՆ

ՏԱՐԱԲՆՈՒՅԹ ՎԵՏԱՔՐՔԻՐ ԽՆԴԻՐՆԵՐ

